

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐՁԱԳԱՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ
ԲՈՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ
ԸՆՏԱՆԵԿԱՆ
ԲՈՆՈՒԹՅԱՆԸ



Գործնական ձեռնարկ
Հայաստանի ոստիկանության համար



COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐՁԱԳԱՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ
ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՆՈՒԹՅԱՆԸ
ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ
ԲՈՆՈՒԹՅԱՆԸ**

**Գործնական
ձեռնարկ
Հայաստանի
ոստիկանության
համար**

Էնթոնի Ուիլսոն
Արշակ Գասպարյան
Մարո Մաթոսյան

Այս աշխատությունում ներկայացված կարծիքները
հեղինակների պատասխանատվությամբ են
և պարտադիր չէ, որ դրանք արտահայտեն Եվրոպայի
խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

ԵՐԵՎԱՆ, 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ

Բովանդակություն

| | |
|--|----|
| ՀԻՄՆԱԽՆԴԻՐ | 5 |
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | 7 |
| ԲԱԺԻՆ I: ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ | 9 |
| I.I. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության սահմանումները | 9 |
| I.II. Ընտանեկան բռնություն, իշխանություն և հսկողություն | 11 |
| I.III. Գենդերային անհավասարություն, կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն | 12 |
| I.IV. Բռնությունից տուժած կանանց համար ծառայությունների և արդարադատության մատչելիության խոչընդոտները | 14 |
| I.V. Կանանց խոցելի խմբերի առջև ծառայած մարտահրավերները | 14 |
| I.VI. Ընտանեկան բռնության հետևանքները | 14 |
| I.VII. Ընտանեկան բռնությունը Հայաստանում | 15 |
| I.VIII. Տուժողին մեղադրելը և կրկնակի վիկտիմիզացիան | 19 |
| I.IX. Սխալ դատողություններ տուժողի մասին | 20 |
| I.X. Ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաները | 22 |
| ԲԱԺԻՆ II. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ | 23 |
| II.I. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը | 23 |
| II.II. Ոստիկանության արձագանքը | 24 |
| 1) Ընդհանուր դիտարկումներ | 24 |
| 2) Շտապ հեռախոսակապի համակարգը | 25 |
| 3) Առաջնային արձագանքի աշխատակցի, ձայնագրող աշխատակցի և քննիչի հիմնական խնդիրները | 25 |
| 4) Առաջնային արձագանքի խումբը | 25 |
| 5) Նախքան միջադեպի վայր ժամանումը | 26 |
| 6) Տարածք մուտք գործելու համար ուժ գործադրելու հիմնավորումը | 26 |
| 7) Միջադեպի վայր ժամանումը | 27 |
| 8) Ապացույցների ձեռքբերումը | 27 |
| II.III.Ներգրավված անձանց հետ շփումը և նրանց հարցաքննումը | 28 |
| 1) Տուժողը | 29 |
| 2) Երեխաները (եթե ներկա են) | 29 |
| 3) Իրավախախտը | 30 |
| 4) Տուժողներին, երեխաներին և իրավախախտներին հարցաքննելու վերաբերյալ առաջարկներ | 30 |
| 5) Իրավախախտի վարքագիծը | 32 |
| 6) Իրավախախտին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը | 32 |

| | |
|--|-----------|
| II.IV. Լրացուցիչ դիտարկումներ, որոնք պետք է հաշվի առնել | |
| ընտանեկան բռնությանն արձագանքելիս | 33 |
| 1) Ինքնապաշտպանություն | 33 |
| 2) Հիմնական (սկզբնական) բռնարարի բացահայտումը | 33 |
| 3) Գաղտնիությունը և տուժողների իրավունքները | 33 |
| 4) Ոստիկանության և ընտանեկան բռնության հետ առնչվող անձանց (տուժողների, իրավախախտների) միջև պրոֆեսիոնալ հարաբերությունների սահմանազատումը | 34 |
| 5) Առաջնորդություն, գործընթացների և գործողությունների նկատմամբ վերահսկողություն | 34 |
| II.V. Ոստիկանության պաշտպանական արձագանքը | 35 |
| 1) Տուժողի անվտանգության ապահովումը և ռիսկերի գնահատումը | 35 |
| 2) Նախազգուշացումներ, անհետաձգելի միջամտության որոշում և պաշտպանական որոշում | 36 |
| ԲԱԺԻՆ III. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ | 43 |
| Քրեական դատավարության գործընթացի ակտիվացումը և ընտանեկան բռնության նկատմամբ ավելի լայն արձագանքը | 44 |
| Երեխաների պաշտպանության գործակալության ստեղծման կարիքը | 44 |
| Դատաբժշկական փորձաքննությունը և կուսության ստուգման արգելքը | 44 |
| Ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով հաշտեցումն ու հաշտարարությունը | 45 |
| Իրավախախտների նկատմամբ վերաբերմունքը | 45 |
| Ընտանեկան բռնության գործերում անձամբ ներգրավված ոստիկանության աշխատակիցների հետ վարվելու համապատասխան քաղաքականությունը | 45 |
| Տվյալներ և վերլուծություն | 46 |
| Մահվան ելքով ընտանեկան դեպքերի գնումը | 47 |
| ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ | 48 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1. Խոցելի, մարզինալացված կամ փոքրամասնությունների խմբերի օրինակներ | 48 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 2. Անվտանգության պլան | 51 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 3. Տեղեկատվություն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հետ կապված օրենքների և լիազորությունների մասին | 52 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 4. Ընտանեկան բռնության դեպքերի քննության ստուգացանկ | 53 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱՎՏՈՎ ՍԱՅՄԱՆՎԱԾ ՈՒՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ | 54 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 6. Հասարակական կազմակերպությունների կողմից կիրառվող ռիսկերի գնահատման հարցաթերթ | 56 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 7. Օգտակար կայքեր | 57 |

ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐ

Այս ձեռնարկը մշակվել է Եվրոպայի խորհրդի, ՀՀ ոստիկանության և Հայաստանի արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը և դրա դեմ պայքարը» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է ամրապնդել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում ներգրավված հիմնական շահագրգիռ կողմերի կարողությունները: Եվրոպայի խորհուրդը կարևորում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության Նոր օրենքի և համապատասխան միջազգային և եվրոպական փաստաթղթերի, մասնավորապես, **Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի** (Ստամբուլի կոնվենցիա) մասին մասնագետների գիտելիքների բարձրացումը, նպաստելով դրանց իրականացման համար տեղեկատվության և հեռանկարային փորձի փոխանակմանը:

Սույն գործնական ձեռնարկի նպատակն է աջակցել ոստիկանության աշխատակիցներին կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում, հատուկ ուշադրություն դարձնելով ընտանեկան բռնությանը, ինչը պայմանավորված է Հայաստանում վերջերս ընդունված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության Նոր օրենքով և Ոստիկանության կողմից ընդունված Նոր իրավական ակտերով: Թեև սույն ձեռնարկն ուղղված է ընտանեկան բռնության դեպքերով օպերատիվ արձագանքի աջակցմանը, սակայն այն նաև հասցեագրված է ոստիկանությունում և այլ համապատասխան մարմիններում այդ աշխատանքը կարգավորող անձանց:

Այս հրապարակումը միտված է ապահովել այնպիսի էական փոփոխություններ և բարելավումներ, որոնք կնպաստեն միջազգային չափանիշներին և լավագույն փորձին համապատասխան Հայաստանի ոստիկանության կողմից արձագանքի արդյունավետության բարձրացմանը, միաժամանակ հաշվի առնելով Հայաստանի ընթացիկ իրավական կարգավորումները, որոնք ոչ բոլոր դեպքերում են համապատասխանում այդ միջազգային չափանիշներին: Ապագայում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում կամ ոստիկանության իրավական ակտերով կատարված ցանկացած փոփոխություն կհանգեցնի սույն ձեռնարկի բովանդակությունը թարմացնելու անհրաժեշտությանը:

Այս ձեռնարկը բաղկացած է երեք բաժնից, որոնք նկարագրում են ընտանեկան բռնության դինամիկան և ազդեցությունը, ընտանեկան բռնությանը գործնական արձագանքի ուղեցույցը և, վերջապես, քաղաքականության գծով խորհուրդները և առաջարկությունները, որոնք կօգնեն ապագայում ապահովել տուժողներին տրամադրվող ծառայությունների և նրանց պաշտպանության ավելի բարձր մակարդակ: Հետևաբար, այս ուղեցույցում կիրառվում են միջազգային չափանիշներով հաստատված մեթոդաբանություն և մոտեցումներ: Ձեռնարկը պատրաստվել է Եվրոպայի խորհրդի կողմից հրապարակված նախորդ ուսումնական նյութերի հիման վրա:

1. Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար: Ուսումնական ռեսուրս իրավապահ մարմինների և արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման համար, հունվար, 2016 թ.¹ :
2. Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեպքերին առնչվելիս Բուլղարիայի ոստիկանության մասնագիտական կարողությունների զարգացումը, հունիս, 2016թ.²
3. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարը Ուկրաինայում, գործնական ձեռնարկ, դեկտեմբեր 2017թ.

Հարկ է նշել, որ այս ձեռնարկը պետք է ուղեկցվի ոստիկանության և մասնագիտացված ծառայությունների ղեկավարների վերապատրաստմամբ, որը պետք է միտված լինի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության ընդհանուր ընկալման և դրանց արձագանքման զարգացմանը:

¹ Տես <https://rm.coe.int/16806ee727>

² Տես <https://rm.coe.int/16806facd0>

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների հիմնական խախտումներից է, որի պատճառներն են տղամարդկանց և կանանց միջև առկա անհավասարությունը և գենդերային խտրականությունը: Ընդհանուր առմամբ, երեք կանանցից և աղջիկներից մեկն իր կյանքի ընթացքում ենթարկվել է ֆիզիկական կամ սեռական բռնության³: Կանանց նկատմամբ բռնությունը համընդհանուր խնդիր է, որը տարածված է և գոյություն ունի ամբողջ աշխարհում՝ անկախ դավանանքից, էթնիկական ինքնությունից կամ ազգությունից:

Ընտանեկան բռնությունը կանանց նկատմամբ բռնության ամենատարածված ձևերից մեկն է: Այն ոչ միայն ֆիզիկական վնասվածքներ, այլ նաև վախ, տառապանք և ինքնավստահության կորուստ է առաջացնում: Այն կարող է նաև հանգեցնել մահվան: Կանանց նկատմամբ բռնության տարբեր տեսակները (ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական) կարող են դրսևորվել ընտանեկան միջավայրում կամ սերտ հարաբերությունների համատեքստում, որի հետևանքով տուժողն իրեն զգում է խոցելի, սեփական մարմնի և զգացմունքների նկատմամբ վերահսկողություն չունեցող, և հաճախ նրան նույնիսկ չի հավատում նրա ընտանիքը և/կամ ընկերները և համապատասխան ինստիտուտները: Զանի որ ընտանեկան բռնությունը անհամաչափորեն դրսևորվում է կանանց նկատմամբ և պայմանավորված է տուժողի՝ կին լինելու հանգամանքով, այն հանդիսանում է **գենդերային հիմքով բռնության** ձև:

Ոստիկանության դերը կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու հարցում խիստ կարևոր է: Նրանք կարող են կանխել «կրկնակի վիկտիմիզացիան» և ապահովել տուժողների անվտանգությունը ոչ միայն արտակարգ իրավիճակներում, այլև հետաքննության և դատավարության ընթացքում: Ի լրումն, ոստիկանության աշխատակիցներն իրենց գործողությունների արդյունքում կարող են հնարավորություն ընձեռել տուժողներին կայացնելու իրենց անվտանգության բարձրացման, ինքնապաշտպանության և բռնության շրջապատույթին վերջ դնելու մասին որոշումներ: Կարևոր է նաև, որ ոստիկանությունը և կանանց նկատմամբ բռնության ու ընտանեկան բռնության հարցերով իրավասու այլ դերակատարները սերտորեն համագործակցեն միմյանց հետ, որպեսզի մեղավորներին պատասխանատվության ենթարկեն և փոխանցեն այն ուղերձը, որ նման բռնությունը չի հանդուրժվելու:

³ ԱՅԿ-ի տեղեկատվական թերթիկ, 2017թ., տես <http://www.who.int/news-room/fact-sheets/detail/violence-against-women>

Չաշվի առնելով ոստիկանության առանցքային դերը՝ կարևոր է, որ ոստիկանության աշխատակիցներն ունենան անհրաժեշտ գիտելիքներ, մասնագիտացում և գործիքներ՝ տուժողի շահերը բոլոր միջոցների հիմքում դնելու, բռնությանն անմիջապես արձագանքելու և ռիսկերի բացահայտումն ու արդյունավետ կառավարումն ապահովելու համար: Տուժողների իրավունքների և կարիքների վերաբերյալ վերապատրաստման բացակայությունը և կարեկցանքի պակասը ոստիկանության (և արդարադատության ոլորտի) աշխատակիցների մոտ մեծապես ազդում է տուժողների վիճակի վրա և հանգեցնում իրավախախտի անպատժելիությանը:

Չաշվի առնելով, որ կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը լայն հասարակական հնչեղություն ունեցող խնդիրներ են, տուժողների, նրանց երեխաների և իրավախախտների հետ առնչվող մյուս գործակալությունները պետք է նաև լավ պատկերացնեն գենդերային հիմքով բռնության ցանկացած ձևի համատեքստը և այլ գործակալությունների հետ համատեղ դրանց արձագանքման ձևերը:

ԲԱԺԻՆ I

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

I.I. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության սահմանումները

Չ նայած աճող հասարակական ուշադրությանը և այս դարերի պատմություն ունեցող արատավոր երևույթը վերացնելուն ուղղված կառավարության խոստումներին, կանայք, անկախ իրենց տարիքից և դիրքից, շարունակում են բռնության ենթարկվել: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության խնդրի արդյունավետ լուծման համար առաջին հերթին կարևոր է հասկանալ, թե ինչ է այն, դրա ազդեցությունը և համատեքստը:

Ստամբուլի կոնվենցիայի սահմանումները

Կանանց նկատմամբ բռնություն հասկացվում է «որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձև և պետք է ներառի գեղեցիկ հիմքով բռնության այն բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս պատճառելուն, այդ թվում՝ նման գործողություններ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, որոնք տեղի են ունենում հանրային կամ մասնավոր կյանքում (Հոդված 3.ա):

Ընտանեկան բռնությունը նշանակում է «ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում» (Հոդված 3.բ.):

Ընտանեկան բռնությունը կարող է դրսևորվել մի քանի ձևով.

- Ֆիզիկական բռնություն՝ հրել, հարվածել, ապտակել, ծեծել, խեղդել, վերցնել անձին անհրաժեշտ դեղամիջոցները, զրկել քնից և/կամ մեկուսացնել:
- Սեռական բռնություն՝ բռնաբարություն, սեռական ակտ կատարելուն և/կամ այլ անձանց հետ սեռական ակտի մեջ ներգրավվելու հարկադրանք, անցանկալի հպում, սեռական

ճանապարհով փոխանցվող վարակներով կամ հիվանդություններով վարակվելու վտանգին ենթարկելը կամ անձին իր կամքին հակառակ անցանկալի սեռական բնույթի պատկերների կամ գործողությունների ականատես դարձնելը:

— Տնտեսական բռնություն՝ գումարը և ռեսուրսները վերահսկելը կամ վերցնելը, կողոպտելը, անձի զբաղվածության հարցերում միջամտության դիտավորյալ փորձը, տուժողին բռնարարից տնտեսապես կախվածության մեջ պահելը՝ նույնիսկ այնպիսի տարրական իրերի հարցում, ինչպիսիք են՝ հացը, օճառը, հագուստը, դեղամիջոցները և այլն:

— Հոգեբանական բռնություն՝ վերբալ (խոսքային) բռնություն, ստախոսություն, ինքնազնադատականի նսեմացում, ծայրահեղ խանդ և անձի գործողությունների վերահսկում, հետամտում, սպառնալիքներ:

Բռնության տարբեր տեսակները կարող են դրսևորվել միաժամանակ կամ առանձին-առանձին: Թեև թվում է, թե ֆիզիկական բռնությունը բռնության ամենատեսանելի տեսակն է, սակայն բռնության այլ տեսակների պարբերական կիրառումը ստեղծում է բռնության շատ ավելի մեծ համակարգ: Բռնարարները բռնության այս տեսակները կիրառում են «իրենց ուզածին հասնելու» համար կամ բռնության ենթարկվածին ցույց տալու, թե «ով է դրության տերը»:

Ընտանեկան բռնությունը համարվում է կանանց նկատմամբ բռնության ձև, քանի որ այն անհամաչափորեն դրսևորվում է կանանց նկատմամբ: Կանանց նկատմամբ բռնության այլ ձևերն են՝

- ▶ Հետամտում
- ▶ Հարկադիր, վաղ ամուսնություն
- ▶ Կանանց սեռական օրգանների խեղում
- ▶ Հղիության ընդհատմանը հարկադրելը/Նախաձննդյան փուլում սեռի ընտրություն
- ▶ Ամլացման հարկադրում
- ▶ Սեռական հետապնդում
- ▶ Թրաֆիքինգ
- ▶ Կոստյումային ստուգում


Ընտանեկան բռնությունը սովորաբար ենթադրում է վիրավորական և հարկադրող վարք, ինչպիսիք են՝ ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բռնությունը, ներառյալ՝ բռնաբարությունը: Այն կարող է նաև ընդգրկել տնտեսական բռնությունը, որը դրսևորվում է՝ ֆինանսական անկախությունից զրկելու և տնտեսական հարցերով որոշումները հսկելու միջոցով: Այդ երևույթները պետք է դիտարկվեն ոչ թե առանձին, այլ որպես շրջապատյալի մի մաս: Փաստացիորեն, ֆիզիկական բռնությունը սովորաբար ամիսների կամ նույնիսկ տարիների ընթացքում ահաբեկման և հսկողության արդյունք է: Հաճախ ընտանեկան բռնությունը նախորդում է բռնության այլ ձևերին, ինչպիսիք են հետամտումը, սեռական հետապնդումը, հարկադիր ամուսնությունը, հղիության ընդհատման հարկադրումը, ամլացման հարկադրումը և կանանց սեռական օրգանների խեղումը: Ինչպես նշված է Ստամբուլի կոնվենցիայում, ընտանեկան բռնությունը կարող է տեղի ունենալ ընտանիքի

կամ ընտանեկան միավորի անդամների միջև, անկախ կենսաբանական կամ իրավաբանական ընտանեկան կապերից⁴: Թեև ընտանեկան բռնությունն առավել հաճախ կատարվում է տղամարդկանց կողմից նախկին կամ ներկա սեռական զուգընկերոջ նկատմամբ, այն կարող է նաև կատարվել կանանց կողմից, և դա կարող է տեղի ունենալ նույնասեռական հարաբերություններում: «Ընտանեկան» եզրույթը չպետք է սահմանափակվի այն վայրով, որտեղ տեղի է ունենում բռնությունը (օրինակ՝ ընտանիքի ընդհանուր բնակարան): Ստամբուլի կոնվենցիան ճանաչում է, որ բռնությունները հաճախ շարունակվում են և նույնիսկ ավելի են սաստկանում հարաբերություններն ավարտվելուց հետո: Այդ իսկ պատճառով Ստամբուլի Կոնվենցիան չի պահանջում տուժողի և իրավախախտի համատեղ բնակության վայրի առկայությունը⁵:

4 Եվրոպայի խորհուրդ, Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար. Ուսումնական ռեսուրս իրավապահ մարմինների և արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման համար, 2016 թվական, էջեր 9-10: 5 Նույն տեղում:

I.II. Ընտանեկան բռնություն. Իշխանություն և հսկողություն

Ընտանեկան բռնությունը չի բխում սթրեսային իրավիճակից, ալկոհոլի չարաշահումից կամ հոգեկան հիվանդությունից: Իրականում ընտանեկան բռնությունը մեկ այլ անձի նկատմամբ գերիշխող դիրք և հսկողություն է ելքադրում: Իրավախախտն ինքն է որոշում, արդյոք պետք է բռնություն գործադրի իր իշխանությունը դրսևորելու և հսկողություն սահմանելու համար, և սովորաբար մանրակրկիտ ձևով հաշվարկում է բռնություն գործադրելու ձևը և ժամանակը: Սովորաբար կիրառվում է հետևյալ մոտեցումը. իրավախախտը սկսում է վախեցնել, նվաստացնել և սպառնալ տուժողին: Այնուհետև, բռնության դրսևորումները սաստկանում են՝ ներառելով տուժողի գործողությունների կամ գումարի օգտագործման նկատմամբ հսկողություն, տուժողի մեկուսացում, զգացմունքային շանտաժ և մանիպուլյացիա: Ընտանեկան բռնության միջամտության ծրագրի կողմից մշակված իշխանության և հսկողության անիվը օգնում է մեզ հասկանալ ընտանեկան բռնության հետ կապված վարքագծերը, որոնք իրավախախտներն օգտագործում են իրենց հարաբերություններում իշխանություն ձեռք բերելու և այն պահպանելու համար⁶:



⁶ Նույն տեղում:
⁷ Ընտանեկան բռնության դեպքերին միջամտելու վերաբերյալ ծրագրեր, Դուլուօ, Միլեստոտա, www.theduluthmodel.org

Գծապատկերը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության դրդապատճառը բռնարարի ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ և ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ունենալու ցանկությունն է: Առանձին դիտարկվելու դեպքում վարքագծի վերոնշյալ դրսևորումները կարող էին իրավախախտում չպարունակել: Միևնույն ժամանակ, իրավախախտում պարունակելու համար վարքագծի ոչ բոլոր դրսևորումները պետք է առկա լինեն: Հարկ է իմանալ, որ իշխանության և հսկողության անիվը ցույց է տալիս, որ ֆիզիկական և սեռական բռնությունը ոտնձգությունների դրսևորման միայն մի մասն է, և որ դրանք նույնիսկ կարող են առկա չլինել ընտանեկան բռնությունների բոլոր դեպքերում: Հանդիսանալով շարունակական վարքագիծ, նույնիսկ ֆիզիկական և սեռական բռնության սպառնալիքը կարող է բավարար լինել, որպեսզի կանայք և երեխաները վախի մեջ ապրեն:

Հիմնական ուղերձները



I.III. Գենդերային անհավասարություն, կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն

Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը կանխելու և դրա դեմ պայքարելու համար կարևոր է հասկանալ մեր հասարակություններում այդպիսի բռնության տարածվածության պատճառները: Կանանց նկատմամբ բռնությունը, ներառյալ ընտանեկան բռնությունը, կանանց և տղամարդկանց միջև հարաբերություններում իշխանության անհավասար բաշխման արդյունք է: Դա նշանակում է, որ դրա հիմքը **գենդերային անհավասարությունն** է, որը ոչ թե առանձին կնոջ անհատական խնդիրն է, այլ հասարակության մեջ կանանց ենթակայության վրա հիմնված սոցիալական խնդիր է: Եվրոպայում և դրանից դուրս հասարակության մեջ տարբեր խորությամբ շարունակում են գոյություն ունենալ հայրիշխանական մշակութային և սեռական նորմերը, իշխանության և աշխատանքի խտրական բաժանումը և կանանց ֆինանսական կախվածությունը ¹⁰:

8 Եվրոպայի խորհուրդ, Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար. ուսումնական ռեսուրս իրավապահ մարմինների և արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման համար, 2016 թվական, էջ 11:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում, 12-13 էջեր:

Կարևոր է հասկանալ, թե ինչ է նշանակում «գենդեր»: Ստամբուլի կոնվենցիան բնորոշում է գենդերը որպես «սոցիալական դերեր, վարքագծի տիպեր, գործունեության տեսակներ և հատկություններ, որոնք սովորաբար հասարակությունը դիտում է որպես պատեհ կանանց և տղամարդկանց համար» (հոդված 3.գ): Այս դերերը, հետևաբար, կենսաբանական առումով նախապես որոշված չեն, ժամանակի ընթացքում դրանք կարող են փոխվել և տարբեր մշակույթներում տարբեր լինել: Գենդերային դերերը, որոնք որոշակի հասարակության համար պատեհ են համարվում կանանց և տղամարդկանց համար, ստեղծել են կանանց նկատմամբ տղամարդկանց գերակայության մշակույթ, իսկ կանայք ավելի քիչ արտոնություններ և իրավունքներ ունեն հասարակության մեջ: Գենդերային դերերը նաև նպաստում են կանանց նկատմամբ բռնության ընդունելի համարվելուն: Սա է պատճառը, որ Ստամբուլի կոնվենցիան հստակ ընդունում է, որ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը կանխելու համար անհրաժեշտ է փոխել և կանանց, և տղամարդկանց վերաբերմունքը և վարքագծերը, որոնք ձևավորվում են նախապաշարմունքների, կարծրատիպերի և սեռային հատկանիշով խտրականության ազդեցության տակ:

Չնայած ՀՀ Սահմանադրության մեջ գենդերային հավասարության սկզբունքի ամրագրմանը և «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության Նոր օրենքի ընդունմանը, «դե յուրե հավասարությունը միշտ չէ, որ հանգեցնում է դե ֆակտո գենդերային հավասարության»¹¹: Ուստի, ընտանեկան բռնության արձագանքի ցանկացած զարգացում պետք է հաշվի առնի գոյություն ունեցող պատմական համատեքստը: 2016 թվականի ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԿԲՀ) «Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» զեկույցում նշվում է, որ «զգալի տոկոս են կազմում այն հայ տղամարդիկ, ովքեր դեռ հավատարիմ են ավանդական և մշակութային նորմերին, որոնք, սակայն, ըստ էության, հայրիշխանական կարծրատիպեր են»¹²: Ընտանեկան բռնությունը և կանանց նկատմամբ բռնությունը արմատախիլ անելու համար չափազանց մեծ կարևորություն ունի գենդերային անհավասարության դեմ պայքարի անհրաժեշտության ընկալումը:

Ընտանեկան բռնությունը իշխանության չարաշահում է: Իրավախախտները ընտանեկան բռնություն են գործադրում՝ տուժողների և նրանց երեխաների նկատմամբ գերիշխող դիրք ունենալու և հսկողություն սահմանելու համար:

Հիմնական ուղերձները

- Կանանց նկատմամբ բռնությունը, ներառյալ ընտանեկան բռնությունը, գենդերային անհավասարության և խտրականության պատճառ և հետևանք են, որի հետ կանայք առնչվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:
- Ընտանեկան բռնությունը գենդերային հիմքերով բռնության ձև է և արմատավորված է հասարակության սոցիալական և մշակութային արժեքների մեջ, որն ապահովում է բռնության նկատմամբ հանդուրժողականության հիմքը: Հայրիշխանական հասարակությունը խրախուսում է տղամարդկանց հավատալ, որ իրենք ունեն գերիշխող դիրք և իրավունք ունեն իշխանություն և հսկողություն իրականացմել իրենց զուգընկերների և/կամ իրենց երեխաների նկատմամբ:
- Ընտանեկան բռնության արդյունավետ կանխարգելման համար կարևոր է հասկանալ, որ այն հիմնված է գենդերային անհավասարության վրա և պայքարել անհավասարության դրսևորումների դեմ:

11 ՄԱԿԲՀ, Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում, 2016 թվական:

12 ՄԱԿԲՀ, Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում, 2016 թվական, էջ 21:

I.IV. Բռնությունից տուժած կանանց համար ծառայությունների և արդարադատության մատչելիության խոչընդոտները

Կանանց հանդեպ բռնության արդարացմանը նպաստող նույն մշակութային ընկալումները, գեղեցիկ էր այն դեպքում, երբ ընտանեկան բռնությունից տուժած կանայք, ակնկալելով պաշտպանություն և արդարադատություն, որոշում են հաղորդել բռնության մասին¹³: Իրավական, ինստիտուցիոնալ, սոցիալ-տնտեսական կամ մշակութային տարբեր մակարդակներում գոյություն ունեցող այս խոչընդոտները ազդում են հատկապես ցածր եկամուտ ունեցող կամ իրենց նկատմամբ բռնություն գործադրող զուգընկերոջից տնտեսապես կախվածություն ունեցող կանանց վրա:

I.V. Կանանց խոցելի խմբերի առջև ծառայած մարտահրավերները

Խոցելի խմբերին պատկանող կանայք հաճախ առնչվում են որոշակի իրավունքների կամ ծառայությունների մատչելիության սահմանափակումների հետ: Սա նշանակում է, որ ոչ միայն կանանց և տղամարդկանց կարգավիճակներն են տարբեր, այլև՝ տարբեր կանանց կարգավիճակները: Օրինակ, գյուղերում բնակվող կանայք, տարեց կանայք, հաշմանդամություն ունեցող կանայք, նույնասեռական/երկսեռական/տրանսգենդեր կանայք, փախստականները կամ ազգային փոքրամասնություններին պատկանող կանայք գտնվում են ավելի անբարենպաստ պայմաններում: Նրանք առնչվում են նաև լրացուցիչ խոչընդոտների, ինչպիսիք են՝ ֆինանսական միջոցների պակասը, սեփական իրավունքների մասին իրազեկվածության պակասը, կարծրատիպերը, որոնք կարող են հանգեցնել ոստիկանության և արդարադատության ոլորտի աշխատակիցների կանխակալության և անտարբերության: Լրացուցիչ տեղեկությունների համար տես Չավելված I-ը:

I.VI. Ընտանեկան բռնության հետևանքները

Ընտանեկան բռնության դիսամիկան տարբերվում է բռնության այլ տեսակների դիսամիկայից, քանի որ բռնարարքը տեղի է ունենում այն անձի կողմից, ում բռնության ենթարկվածը սիրում կամ վստահում է: Այսպիսի բռնարարքը երկարատև կրկնվող վարքագծի մի մասն է, որը ստեղծում է տարբեր հանգամանքներից բխող կախվածություն, ինչը դժվարացնում է բռնության ենթարկված անձի հեռանալը: Ընտանեկան բռնություն պարունակող հարաբերություններն անմիջապես չեն սկսվում բռնությամբ: Ընտանեկան բռնության դաժանությունը ժամանակի ընթացքում աստիճանաբար աճում է: Բոլորովին տարօրինակ չէ, որ ընտանեկան բռնության վերաճած հարաբերությունները սկսված լինեն որպես առողջ ու երջանիկ հարաբերություններ¹⁴: Փաստացիորեն, բռնության պրոգրեսի (կամ

¹³ Նույն տեղում:

¹⁴ Կանանց աջակցման կենտրոն, Չայաստան. Ընտանեկան բռնությունից տուժածների հետ աշխատանքի ուղեցույց 2016թ., էջ 13, տես http://www.womensupportcenter.org/wp-content/uploads/2017/03/WSC_Manual_ENG_082316.pdf

Եսկալացիայի) գործընթացը բարդացնում է բռնությունը վերապրած անձի՝ բռնություն կիրառողի նկատմամբ ունեցած զգացմունքները և դժվարացնում է հեռանալու կամ օգնություն խնդրելու գործընթացը:

Ընտանեկան բռնության ենթարկված կանայք գտնվում են ֆիզիկական բռնության հետևանքով առողջական բազմաթիվ խնդիրների առաջացման վտանգի տակ: Տուժողներին նաև սպառնում է սեռական ճանապարհով փոխանցվող վարակների, չալանավորված հղիության և հարկադրական հղիության ընդհատման վտանգը: Բազմաթիվ դեպքերում ընտանեկան բռնությունը կարող է ավարտվել մահվամբ: Հոգեբանական առումով ընտանեկան բռնությունը կարող է, մասնավորապես, հանգեցնել, ի թիվս այլոց, դեպրեսիայի, անհանգստության, սնվելու խանգարումների, ցածր ինքնագնահատականի, խուճապի նոպաների, ալկոհոլի/թմրանյութերի չարաշահման, ինքնասպանության փորձերի: Ընտանեկան բռնությունը նաև նշանակալի հետևանքներ է թողնում տուժողի սոցիալական միջավայրում: Ընտանիքը, ընկերները և գործընկերները կարող են ենթարկվել բռնարարի վրեժխնդրությանն ու սպառնալիքներին, եթե նրանք փորձում են միջամտել կամ օգնել տուժողին հեռանալ բռնություն պարունակող հարաբերություններից¹⁵:

Ընտանեկան բռնության ենթարկված երեխաների մոտ կարող են առաջանալ զարգացման խնդիրներ, հոգեբանական խանգարումներ, դժվարություններ դպրոցական կյանքում, ագրեսիվ վարքի դրսևորում և ցածր ինքնագնահատական: Ընտանեկան բռնության պայմաններում ապրող երեխաները չափահաս դառնալիս ավելի հաճախ են իրավախախտումներ կատարում կամ բռնարար զուգընկերներ ընտրում, քանի որ բռնությունը հաճախ նրանց կողմից ընդունելի է համարվում: Ստամբուլի կոնվենցիան, մասնավորապես, ճանաչում է ընտանեկան բռնության ծանր ազդեցությունը երեխաների վրա, ովքեր կարող են լինել ինչպես ընտանեկան բռնությունից տուժողներ, այնպես էլ դրա ականատեսներ¹⁶:

Վերջապես, առկա են նաև հետևանքներ ողջ հասարակության համար, այդ թվում՝ ոչ միայն բռնության ուղղակի ծախսերի (առողջական, սոցիալական ծախսեր), այլև հասարակական կյանքում տուժողի կողմից ներդրման նվազման առումով: Ավելին, եթե մեղավորները պատասխանատվություն չեն կրում, հասարակությունը դրանով ուղերձ է հղում, որ բռնությունը հանդուրժվում է, ինչը կարող է հանգեցնել ավելի ու ավելի լուրջ բռնության: Այդ ամենը կարող է հանգեցնել նրան, որ ապագա տուժողները բողոք չներկայացնեն և չդիմեն օգնության:

Հայտնի է, որ ցանկացած հասարակությունում սեռական զուգընկերոջ կողմից բռնաբարության, ֆիզիկական սպառնալիքների և սեռական հետապնդման արդյունքում պահանջվող ուղղակի բժշկական և հոգեկան առողջության ծառայությունների գծով ծախսերը և վարձատրվող աշխատանքի արտադրողականության կորուստը յուրաքանչյուր տարի կառավարության համար զգալի ծախսեր է առաջացնում: Կանանց մեկուսացումը կամ նրանց աշխատելու կամ կրթություն ստանալու արգելքը ոչ միայն բացասաբար է անդրադառնում ընտանիքի նյութական վիճակի վրա, այլև խոչընդոտում է Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացմանը:

I.VII. Ընտանեկան բռնությունը Հայաստանում

Ավանդական մշակութային պատկերացումների պատճառով Հայաստանում կանայք սովորաբար ստորադասվում են տղամարդկանց՝ ավելի քիչ իշխանություն ունենալու առումով: Ամուսնական կյանքում հայաստանցի տղամարդկանց սովորեցնում են լինել կնոջ տերը, մինչդեռ կանանց՝ լինել ամուսիններին հնազանդ: Կանանց նաև սովորեցնում են, որ իրենց ամենակարևոր դերը հասարակության մեջ “օջախ պահողի” կամ ընտանիքի ու տան մասին հոգ տանողի դերն է: Սա տղամարդկանց օժտում է ընտանիքում, այդ թվում՝ կանանց նկատմամբ վերահսկողի և որոշումներ

¹⁵ Եվրոպայի խորհուրդ, Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար. ուսումնական ռեսուրս իրավապահ մարմինների և արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման համար, 2016 թվական, 15-16 էջեր:
¹⁶ Նույն տեղում:

կայացնողի բացառիկ իշխանությամբ, իսկ կանանց արժեքը բացառապես կապվում է տան հետ: Կանանց սովորեցնում են, որ լավ հայ կինը պետք է հնազանդվի ամուսնուն, որոշ մարդիկ նույնիսկ կարծում են, որ տղամարդիկ իրենց չենթարկվող կանանց պետք է ծեծեն: Հասարակության նման դրվածքը խրախուսում է հսկողությունն ու բռնությունը և չափազանց դժվարացնում հայաստանցի կանանց համար բռնություն պարունակող հարաբերությունից դուրս գալը: Երեխաներին նույնպես ընտելացնում են այս գաղափարներին ու մայրերին ամոթանք տալիս, որ չլինեն ընտանիքը:

Երբեմն հսկող վարքագիծը ձեռք է բերվում շատ ավելի փոքր տարիքից, երբ հայկական ընտանիքներում տղաներից ակնկալվում է հսկել իրենց բույրերի, նույնիսկ՝ մայրերի գործողություններն ու գտնվելու վայրը: Տղաներին օժտում են հսկողության բոլոր իրավունքներով ու սովորեցնում ընտանիքում ունենալ իշխանություն ու տեր լինել:

Ավանդաբար, երբ հայ կանայք ամուսնանում են, նրանք տեղափոխվում են իրենց ամուսինների տուն: Եթե գործադրվում է բռնություն, ապա այն ավելի է բարձրացնում կնոջ խոցելիությունը, քանի որ նա գտնվում է իր համար նոր վայրում, որտեղ բոլորն աջակցում են բռնարարին, իսկ ինքը մեկուսացված է իր մտերիմներից ու ընկերներից: Հայաստանում շատ է արժևորվում հարգանքը մեծերի նկատմամբ, հարսներից ակնկալվում է հնազանդ լինել սկեսրոջը, ով ենթադրաբար ավելի գիտակ է ու կրում է հարսին կրթելու ու տնտեսվարություն սովորեցնելու պարտականությունը: Սակայն, մեր փորձը ցույց է տալիս, որ նման դրվածքը սկեսուրները երբեմն չարաշահում են ու դառնում իրենց հարսների համար եմոցիոնալ, տնտեսական ու ֆիզիկական բռնության նոր աղբյուր:

Կանանցից ակնկալվում է մնալ տանն ու խնամել երեխաներին, իսկ տղամարդկանցից՝ գումար վաստակել: Արդյունքում ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որտեղ կանայք սկսում են իրենց ամուսիններից ֆինանսական կախվածության մեջ գտնվել: Այն իրավիճակներում, երբ առկա է բռնություն, կնոջ համար կարող է դժվար լինել բռնարարից հեռանալը:

Նմանատիպ եզրակացություններ կարելի է անել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի Հայաստանում ընտանեկան բռնության տարածման վերաբերյալ 2016 թ. հետազոտության հիման վրա: Հետազոտության տվյալները պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ հոգեբանական բռնությունը (ներկայիս կամ նախկին զուգընկերոջ կողմից) բռնության բոլոր ձևերի «առաջատարն է», որին հաջորդում են տնտեսական շահագործումն ու ֆիզիկական բռնությունը¹⁷: Հոգեբանական բռնության ամենատարածված ձևերն են կին զուգընկերոջը վիրավորելը, նսեմացնելը, դիտավորությամբ նրան վախեցնելը կամ ահաբեկելը, ինչպես նաև զուգընկերոջ կողմից ստորացումն այլոց ներկայությամբ¹⁸:

Ինչ վերաբերում է տնտեսական բռնությանը, ապա դրա ամենատարածված ձևերն են՝ զուգընկերոջ կողմից կանանց աշխատելու, աշխատանքի գնալու, գումամեր կատարելու և գումար վաստակելու արգելքները: Ֆիզիկական բռնության ամենատարածված ձևերն են տղամարդու կողմից իր կին զուգընկերոջը ապտակելը կամ նրան վնասելու նպատակով նրա վրա իրեր շարտելը, ինչպես նաև նրան հրելը կամ քաշքշելը¹⁹:

Հայաստանում օգնության դիմելը կարող է դժվար լինել, քանի որ ամուսնալուծությունը կամ ընտանիքից հեռանալը, կամ ընտանեկան անձնական խնդիրներն ընտանիքից դուրս քննարկելը ամոթ է համարվում, որի պատճառով բռնության ենթարկված անձինք վարանում են օգնություն փնտրել նույնիսկ ամենալուրջ իրավիճակներում:

17 ՄԱԿԲՀ, Տղամարդիկ և գեղեցիկի հավասարության հիմնախնդիրը Հայաստանում, Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների գեկույց 2016, էջ 20:
18 Նույն տեղում., p. 57-58.
19 Նույն տեղում.

Ընտանեկան բռնությունից տուժածների համար աջակցման ծառայությունների գաղափարը նոր է, իսկ կառավարության կողմից այդ ծառայություններին շատ քիչ օժանդակություն է տրվում: Սա է պատճառը, որ տուժողները սովորաբար չգիտեն, որ գոյություն ունի օգնության հնարավորություն, և չգիտեն, թե ուր գնալ և ում դիմել, եթե օգնության կարիք ունեն²⁰:

Ընտանեկան բռնության պատճառների և հետևանքների վերաբերյալ գոյություն ունեն մի շարք մտացածին պատկերացումներ և կարծրատիպեր, որոնք կարող են լուրջ բացասական ազդեցություն ունենալ տուժողների պաշտպանության և նրանց տրամադրվող աջակցության վրա: Տուժողներին ավելի շատ վնաս հասցնելուց խուսափելու համար ուսիականությունը պետք է ըմբռնումով մոտենա նրանց վերաբերմունքին: Ստորև ներկայացված են ընտանեկան բռնության վերաբերյալ որոշ մտացածին պատկերացումներ և փաստեր.

| ՄՏԱՑԱԾԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ | ՓՈՒՏԵՐ |
|--|--|
| Ընտանեկան բռնություն վերապրած անձն ունի հոգեբանական խանգարումներ | Ցանկացած անձ, անկախ նրա ֆիզիկական կամ հոգեկան առողջությունից, սոցիալական կարգավիճակից կամ գույքային վիճակից, էթնիկ պատկանելությունից կամ տարիքից, կարող է ներգրավվել բռնություն պարունակող հարաբերություններում: Կանայք հաջողությամբ հաղթահարում են ընտանեկան բռնությունը և համալիր ռազմավարություններ են կիրառում գոյատևելու համար: Տարբեր եղանակներով խուսափում են դրանից Ընտանեկան բռնությունից տուժողների մեծամասնությունը հոգեպես առողջ է, թեև հոգեկան հիվանդություն ունեցող անձինք պաշտպանված չեն իրենց ամուսնու կամ զուգընկերոջ կամ ընտանիքի այլ անդամի կողմից բռնության ենթարկվելուց: Ընտանեկան բռնության ենթարկված որոշ անձանց մոտ ի հայտ են գալիս բռնության հոգեբանական հետևանքներ, ինչպիսիք են՝ հետտրավմատիկ սթրեսի սիմպտոմը, դեպրեսիան, որոնք այնուհետև պատճառ են հանդիսանում տուժողին հոգեպես ոչ առողջ համարելու համար: |
| Ցածր ինքնազնահատականը դրդում է մարդկանց ներգրավվել բռնություն պարունակող հարաբերություններում: | Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընտանեկան բռնությունից տուժած անձանց ընդհանուր բնութագրիչը միայն կին լինելն է, նրանք կարող են ունենալ տարբեր սոցիալական կամ համայնքային ծագում կամ պատկանելիություն: Բռնությունից տուժած անձանց մոտ կարող է նկատվել ինքնազնահատականի անկում, քանի որ բռնարարները հաճախ ստորացնում, նվաստացնում և քննադատում են նրանց: |
| Ընտանեկան բռնության ենթարկված անձինք երբեք չեն լքում իրենց բռնության ենթարկածին, իսկ եթե լքում են, ապա ներգրավվում են բռնություն պարունակող այլ հարաբերությունում: | Ընտանեկան բռնության ենթարկված անձանց մեծ մասը հեռանում է բռնարարներից, հաճախ՝ մեկից ավելի անգամ: Հնարավոր է, որ մշտական բաժանումը հաջողվի մի քանի փորձից միայն, քանի որ բռնությունից տուժած անձանց հեռանալու մտքից հետ պահելու կամ հեռանալու դեպքում նրանց վերադարձնելու նպատակով բռնարարները կիրառում են բռնություն, ֆինանսական վերահսկողություն, երեխաների հարցով սպառնալիքներ, որպեսզի տուժողին ստիպեն վերադառնալ: Քանի որ հաճախ նոր բռնության վտանգն աճում է, երբ տուժածը լքում է բռնարարին, բաժանվելն էլ ավելի է բարդանում, եթե նրանք չեն կարող ստանալ արդյունավետ իրավաբանական օգնություն, ֆինանսական աջակցություն և պաշտպանություն: Չնայած նրան, որ կարող են լինել դեպքեր, երբ բռնությունից տուժած որոշ անձինք ներգրավվում են այլ հարաբերություններում, որտեղ զուգընկերը հետագայում սկսում է բռնանալ նրանց նկատմամբ, չկա որևէ ապացույց առ այն, որ բռնությունից տուժած անձանց մեծամասնության հետագա կյանքն ընթանում է նման սցենարով: |
| Բռնարարներն իրենց կողակցին կամ ամուսնուն բռնության են ենթարկում ավելի հաճախ կամ թմրանյութերի ազդեցության տակ: | Ավելի հաճախ կամ թմրանյութերի չարաշահումը չի հանդիսանում ընտանեկան բռնության դրդապատճառ, չնայած այն հաճախ է օգտագործվում որպես արդարացում: Որոշ դեպքերում ավելի հաճախ թմրանյութերի չարաշահումը կարող է մեծացնել բռնության դեպքերի հաճախականությունը և որոշ դրվագներում հանգեցնել բռնության ուժեղացման: |

20 Կանանց աջակցման կենտրոն, Հայաստան. Ընտանեկան բռնությունից տուժածների հետ աշխատանքի ուղեցույց, 2016թ., էջեր 25–26:

| | |
|--|---|
| <p>Բռնարարներն իրենց զուգընկերոջը կամ ամուսնուն բռնության են ենթարկում սթրեսի կամ գործազրկության պատճառով:</p> | <p>Սթրեսը կամ գործազրկությունը չի հանդիսանում զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրելու դրդապատճառ: Հաշվի առնելով այն, որ ընտանեկան բռնությունն ընդգրկում է սոցիալ-տնտեսական բոլոր մակարդակները, հետևաբար, այն չի կարելի կապել գործազրկության կամ աղքատության հետ: Նմանապես, անդրադառնալով այն տեսակետին, թե սթրեսը հանգեցնում է ընտանեկան բռնության, առավել հավանական կլիներ, եթե բռնարարները բռնություն կիրառեին իրենց ղեկավարների կամ աշխատակիցների, այլ ոչ թե իրենց զուգընկերոջ նկատմամբ:</p> |
|--|---|

Հիմնական ուղերձները

- Ընտանեկան բռնությունը ազդում է բոլոր մարդկանց վրա՝ անկախ նրանց մշակույթից, դասակարգային պատկանելիությունից, էթնիկ պատկանելիությունից և սեռական կողմնորոշումից: Այն նույնչափ լուրջ խնդիր է հարուստների, կրթվածների, կրոնապաշտների և նույնասեռականների ընտանիքներում:
- Ընտանեկան բռնությունը պահի թելադրանքով հավասարակշռությունից դուրս գալու իրավիճակ ՉԷ, ոչ էլ՝ պատահական ապտակ կամ անլուրջ հարված: Բռնարարը նորմալ ՉԷ: Բռնարարը ձեռքբերովի վարքագիծ է և ոչ թե «բնական» հակազդեցություն արտաքին որևէ միջադեպի: Բռնության կիրառումը իրավախախտի ընտրությունն է: Ընտանեկան բռնությունը հսկողական և բռնի վարքագծերի համակարգ է, որը լուրջ հետևանքներ է առաջացնում: Բռնարարները հերքում են բռնարարի տեղի ունենալը և նվազեցնում են դրա հետևանքները: Նրանք իրենց բռնի վարքագծի համար, որպես կանոն, մեղադրում են բռնության ենթարկվածին կամ այլ մարդկանց: Բռնարարներն հազվադեպ են ընդունում, որ սխալ բան են արել և լիարժեք պատասխանատվություն չեն ստանձնում իրենց գործողությունների համար: Հայաստանում ընտանեկան բռնության արդյունքում կատարված որոշ սպանությունների դեպքում բռնարարները փորձել են ներկայացնել, թե իբր իրենց կանանց հետ դժբախտ դեպք է տեղի ունեցել կամ նրանք ինքնասպանություն են գործել:
- Բռնարարները մեր կյանքում հանդիպող սովորական մարդիկ են: Նրանք հազվադեպ են անձնականին կամ հոգեկան առողջության խանգարումներ ունենում: Բռնարարներն իրականում հիանալի կերպով կարողանում են մանիպուլացնել մարդկանց, հաճախ հմայիչ են, ինտիմ հարաբերություններից դուրս բռնություն չեն կիրառում:
- Բռնության խնդիրը ՉԻ լուծվի առանց օգնության: Եթե բռնարարներն իրենց գործողությունների համար պատասխանատվության չենթարկվեն, նրանց գործողությունները չեն փոխվի: Բռնարարներն ու բռնության ենթարկվածները պետք է օգնություն ստանան առանձին վայրերում: Փորձը ցույց է տալիս, որ բռնություն պարունակող հարաբերություններում բարկության կառավարման մեթոդները (որոնք բռնարարին սովորեցնում են, թե ինչպես ավելի արդյունավետ վերահսկել զգացմունքները) ու ամուսնական խորհրդատվության ծառայությունները (որոնք թույլ են տալիս բռնարարին պարապմունքի ընթացքում իշխանություն և հսկողություն գործադրել) ավելի են վտանգում բռնության ենթարկվածներին:
- Բռնարարը երկարատև հոգեբանական հետք է թողնում բռնության ենթարկված անձանց՝ հատկապես երեխաների վրա: Բռնության միջավայրում մեծացող երեխաներն ավելի հակված են փախչել տնից, բռնություն կիրառել, քրեական վարքագիծ դրսևորել, հոգեբանական խանգարումներ ունենալ, չարաշահել ալկոհոլ կամ թմրանյութեր²²:

21 Կանանց աջակցման կենտրոն, Հայաստան. ընտանեկան բռնությունից տուժածների հետ աշխատանքի ուղեցույց, 2016թ., 91–93 էջեր:

22 Կանանց աջակցման կենտրոն, Հայաստան. ընտանեկան բռնությունից տուժածների հետ աշխատանքի ուղեցույց, 2016թ., էջեր 20–23:

I.VIII. Տուժողին մեղադրելը և կրկնակի վիկտիմիզացիան

Տուժողին մեղադրելը «հերքման գործողություն է, որը տեղի է ունենում, երբ հանցագործության կամ պատահարի համար պատասխանատվությունն ամբողջությամբ կամ մասամբ իրավախախտի փոխարեն դրվում է տուժողի(ների) վրա: Այդպիսի մեղադրանքը կարող է արտահայտվել իրավական, բժշկական և հոգեկան առողջության ոլորտի մասնագետների, ինչպես նաև ՉԼՄ-ների, ընտանիքի անմիջական անդամների և այլ ծանոթների կողմից տրված բացասական սոցիալական արձագանքների ձևով²³»: Իրավախախտները նույնպես կարող են մեղադրել տուժողներին և հրաժարվել իրենց գործողությունների համար պատասխանատվությունից: Շատ դեպքերում տուժողին մեղադրելը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակների, երբ տուժողն ինքն իրեն մեղադրում է բռնության համար²⁴:

Տուժողին մեղադրելու օրինակներ.

- » Նա ոստիկանություն է դիմել, քանի որ ցանկանում է վրեժխնդիր լինել կամ երեխաներին խնամելու իրավունք ստանալ
 - ▶ Դա ընդամենը ընտանեկան վեճ է
 - ▶ Դրանում մեղավորը նա է կամ նա չի դիմադրել
 - ▶ Նա երբեք կնոջը չի հարվածել, ուստի դա բռնություն չի կարելի համարել
 - ▶ Ինչու՞ է կինը այդքան երկար սպասել մինչև նրան լքելը: Ինչու՞ միանգամից չի հեռացել²⁵

Կրկնակի վիկտիմիզացիան կարելի է բնորոշել որպես ընտանեկան բռնության կամ կնոջ նկատմամբ բռնության այլ ձևերից տուժած անձի նկատմամբ համապատասխան կառույցների, ծառայություններ մատուցողների, լրատվական միջոցների, համայնքի և/կամ ընտանիքի կողմից շահարկվող կարծրատիպերի և տուժողին մեղադրելու հետ կապված վարքագծի, գործելակերպի և գործընթացների հետևանքով վերջինիս պատճառված լրացուցիչ տրավմա²⁶:

Կրկնակի վիկտիմիզացիայի հետևանքները հակասում են ընտանեկան բռնության նկատմամբ զոհակենտրոն մոտեցմանը և կարող են հանգեցնել անարդյունավետ և վնասակար միջամտությունների: Եթե տուժողը համապատասխան կառույցների կամ ծառայություններ մատուցողների հետ շփման արդյունքում վերապրում է տրավմա հարուցող ապրումները, ապա դա կարող է նվազեցնել նրա վստահությունը համակարգի նկատմամբ, ինչպես նաև նվազեցնել այն համոզմունքը, որ կա մեկը, ով կարող է օգնել նրան և իր երեխաներին, և նվազեցնել նրա կողմից ապագայում օգնության դիմելու հավանականությունը²⁷:

Հայաստանում տուժողները հաճախ արտահայտում են այն կարծիքը, որ ոստիկանությունը նրանց չի հավատա կամ ընտանեկան վեճը լուծելու համար հետ կուղարկի բռնարարի մոտ, կամ դատավորը կհարցնի «դու ի՞նչ ես արել, որ նա քեզ ծեծել է», կարծես՝ ծեծը խնդրի լուծման արդարացված միջոց է և կարծես՝ մեղավորը տուժողն է: Ոստիկանությունը պետք է կիրառի զոհակենտրոն մոտեցում, որի պարագայում հաշվի են առնվում և ապահովվում են տուժողի կարիքները և անվտանգությունը, խուսափելով տուժողներին կրկնակի տրավմայի ենթարկելուց:

23 Կանադայի ռեսուրսների կենտրոնը հանցագործությունից տուժածների համար, «Տուժողի մեղադրում», 2009թ., տե՛ս http://crevc.ca/docs/victim_blaying.pdf

24 Եվրոպայի խորհուրդ, Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար. իրավապահ մարմինների և արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման առնչությամբ ուսումնառության ռեսուրս, 2016 թվական, էջեր 17-19:

25 Նույն տեղում.

26 Նույն տեղում.

27 Նույն տեղում.

Հիմնական ուղերձները

— Ընտանեկան բռնության մասին մտացածին և թյուր պատկերացումները խրախուսում են տուժողին մեղադրելը: Գոյություն ունեցող թյուր պատկերացումների և կարծրատիպերի հետևանքով հաճախ տուժողի փոխարեն հավատում են իրավախախտին:

— Կրկնակի վիկտիմիզացիան կարող է առաջանալ տուժողի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի, հարգանքի բացակայության և բռնության դիմամիկան չհասկանալու հետևանքով: Կրկնակի վիկտիմիզացիայի ենթարկված տուժողների կողմից բռնության մասին հայտնելու և ցուցմունք տալու հավանականությունն ավելի ցածր է:

— Մասնագետները պետք է լավ պատկերացնեն սեփական վախերը, նախապաշարմունքները և կարծրատիպերը՝ տուժողներին առաջարկվող աջակցությանը չվնասելու համար²⁸:

I.IX. Սխալ դատողություններ տուժողի մասին

Ընտանեկան բռնությունը, տուժողին մեղադրելը և կրկնակի վիկտիմիզացիան կործանարար ազդեցություն են թողնում կանանց և երեխաների առողջության և կյանքի վրա: Տուժողները կարողանում են հարմարվել և պաշտպանվողական մեխանիզմներ գտնել բռնությունն պարունակող հարաբերությունների պայմաններում գոյատևելու համար:

Բռնարարքի, տուժողին մեղադրելու և կրկնակի վիկտիմիզացիայի հետևանքով ընտանեկան բռնության ենթարկված անձանց ներհատուկ վարվելակերպը.

► **Խուսափում.** թեմային առնչվելիս այն շրջանցելը, պատասխան չտալը, թեմայի հետ առերեսման փաստը չընդունելը, պատասխանատվությունից հրաժարում՝ գրույցից հեռանալով և «հիմար» ձևանալով:

► **Մեղադրում.** բռնարարի գործողությունների համար ուրիշներին մեղադրելը, օրինակ՝ «Բռնությունը հորից է սովորել, չի կարող փոխվել», «Սկեսուրս է նրան ստիպում այդպես վարվել»:

► **Արդարացում.** անընդհատ արդարացումներ փնտրելը, իր (կամ բռնարարի) գործողություններն արդարացնելը կամ պատճառներ բերելը:

► **Թերազնահատում.** իրողությունը «մեղմ գույներով» ներկայացնելը, օրինակ՝ «ես ծեծված կին չեմ, ինձ երբեք էլ չեն հարվածել», այսինքն՝ բռնության այլ ձևերը անտեսելը կամ ֆիզիկական բռնության աստիճանը հերքելը:

► **Փոխակերպում.** այլ անձի նկատմամբ բարկություն արտահայտելը, քանի որ բռնություն կիրառող անձի վրա բարկանալը չափազանց վտանգավոր կլինի. երեխաների, ընտանի կենդանիների վրա բղավելը:

► **Ինքնամեկուսացում.** միայնակ մնալը, մարդկանց հետ շփումներից խուսափելը, տնից ընդհանրապես դուրս չգալը (հաճախ դա հենց այն է, ինչին բռնարարը ձգտում է հասնել):

► **Ներքուստ մեղքի ընդունում.** սեփական անձին մեղադրելը, ասելը, որ դա «իմ մեղքն էր», «եթե ես ավելի լավ կին լինեի, նա բռնություն չէր կիրառի...»:

28 Եվրոպայի խորհուրդ, Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար. ուսումնական ռեսուրս իրավապահ մարմինների և արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման համար, 2016 թվական, 17-19 էջեր:

► **Փախուստ.** փախուստ ճշմարտությունից, օրինակ՝ բնակավայրի փոփոխում, թմրանյութերի կամ ալկոհոլի չարաշահում, հեռուստացույցից կառչելը, անընդհատ աշխատելը, խաղամոլություն, գերսնվելը:

Դիմադրություն. ճշմարտության և պատասխանատվության դեմ ըմբոստանալը, օրինակ՝ մարդկանց առաջարկներին, խորհուրդներին դիմադրելը և այլն:

Ստախոսություն. նույնիսկ ճշմարտությունն իմանալու դեպքում, դրա մերժումն այլոց մոտ:

Ագրեսիա. Այլ անձանց վախեցնելը, հարձակվելը, սպառնալը, վերահսկելը կամ բռնանալը, որպեսզի մարդիկ նրա հետ ճշմարտությունից չխոսեն:

Չարմարվողականություն. ձևացնել, թե համաձայնվում է, երբ իրականում համաձայն չէ: Սրա շնորհիվ մարդիկ այլևս հարցականի տակ չեն դնում նրա վարքագիծը, օրինակ՝ խոստանում է ընտանիքի անդամներին/ընկերներին, որ կզանգահարի ոստիկանություն կամ «հաջորդ անգամ» օգնության կդիմի, բայց չի անում:

► **Մերժում.** ձևացնել, թե ոչինչ տեղի չի ունենում:

► **Բանականության դերի չափազանցում.** հույզերի մերժում, կառչում բանականությունից, օրինակ՝ տեղի ունեցածին բարդ բացատրություններ տալը՝ առանց որևէ հույզ արտահայտելու²⁹:

Չիմնական ուղերձը

— Ոստիկանությունը պետք է խուսափի տուժողի վարքագծի հիման վրա նրա մասին դատողություններ անելուց, այլ պետք է օբյեկտիվորեն գնահատի իրավիճակը և բացահայտի վարքագծի հետևում բողարկված ճշմարտությունը:

²⁹ Կանանց աջակցման կենտրոն, Չայաստան. ընտանեկան բռնությունից տուժածների հետ աշխատանքի ուղեցույց, 2016թ., էջեր 37–39:

I.X. Ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաները

Թեև Հայաստանում երեխաներին խիստ կարևորություն է տրվում, սակայն երեխաների պաշտպանության և բռնությունների դեպքերում երեխաների վիճակը և նրանց սպառնացող վտանգը գնահատելու իրավասություն ունեցող համապատասխան ծառայություններ դեռևս չկան: Տարիներ շարունակ ընտանիքներում երեխաների նկատմամբ սեռական և ֆիզիկական բռնության ավելի շատ դեպքեր են տեղի ունենում, սակայն դեռևս միջոցներ չեն ձեռնարկվում երեխային պաշտպանելու և նրան բռնության միջավայրից հեռացնելու համար:

Երեխաները կարող են ենթարկվել ընտանեկան բռնության ուղղակիորեն (որպես առաջնային տուժողներ) կամ անուղղակիորեն (որպես բռնության ականատես): Ընտանեկան բռնության ականատես լինելը կարող է նույնքան անդառնալի հետևանքներ ունենալ, որքան դրա ուղղակի տուժողը լինելը: Երբ ծնողները կամ ընտանիքի այլ անդամները բռնություն (հոգեբանական, ֆիզիկական կամ սեռական) են կիրառում, նրանք կարող են շատ մեծ վնաս հասցնել երեխաներին³⁰: Նախորդ տասնամյակում կատարված մեծ թվով ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանեկան բռնությունը երեխայի համար մեծ հուզական և վարքային հետևանքներ ունի (ագրեսիայի բարձր մակարդակ, դեպրեսիա, գայրույթ, անհանգստություն և սովորելու հետ կապված դժվարություններ): Վերջին հետազոտության հեղինակը պնդում է, որ ընտանեկան բռնության ենթարկվող երեխաների վրա ազդեցությունը նույնիսկ ավելին է, քան ընկալվել է նախկինում³¹:

Ընտանեկան բռնության միջադեպի վայրում ոստիկանության գործողությունները չափազանց կարևոր նշանակություն ունեն: Եթե ներկա են երեխաներ, ապա երեխաների հետ խոսելու համար պատասխանատու ոստիկանության աշխատակիցը, հնարավորության դեպքում, պետք է կենտրոնանա միայն երեխայի հետ խոսելու վրա: Երեխայի հետ շփվելու եղանակը, ինչպես նաև բառերի ընտրությունը պետք է կատարվի հաշվի առնելով երեխայի տարիքը և զարգացման մակարդակը: Սա կարող է լինել երեխայի միակ հնարավորությունը՝ ինչ-որ մեկին իրենց իրավիճակի մասին պատմելու համար: Ոստիկանության աշխատակիցները նաև պետք է փորձեն երեխաներին տեղեկացնել այն մասին, թե այնուհետ ինչ տեղի կունենա (տեղեկությունը հարմարեցնելով երեխայի տարիքին):

Ոստիկանության աշխատակիցները պետք է լավ պատկերացնեն, որ ընտանեկան բռնության ենթարկված երեխաները ընտանեկան բռնությանը արձագանքում են տարբեր դրսևորումներով: Ոմանք դառնում են անհանգիստ և բռնի, միևնույն ժամանակ դառնում են լուռ և ծածկամիտ: Նրանք կարող են հրաժարվել խոսել ընտանեկան բռնության մասին՝ բռնարարի (սովորաբար ծնողի) հանդեպ հավատարմության պատճառով, ամոթից, որ չեն կարողացել կանգնեցնել բռնությունը, վախենալով հետևանքներից և այլն³²:

30 Եվրոպայի խորհուրդ, Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար. ուսումնական ռեսուրս իրավապահ մարմինների և արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման համար, 2016 թվական, 26-29 էջեր:

31 Կարոլինա Օվերլին (Carolina Overlien): Ընտանեկան բռնության ենթարկվող երեխաներ. եզրակացություններ գրականությունից և առաջիկա մարտահրավերներ, Սոցիալական աշխատանքի ամսագիր 10(1), էջեր 80-97:

32 Եվրոպայի խորհուրդ, Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար. ուսումնական ռեսուրս իրավապահ մարմինների և արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման համար, 2016 թվական, 26-29 էջեր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆՑԵՐ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

II.1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը

2017 թ.-ի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության պառլամենտն ընդունեց ընտանեկան բռնության կանխարգելման հետ կապված հարցերը կարգավորող առաջին՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք): «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» նոր օրենքը նպատակ ունի կանխել ընտանեկան բռնությունը, պաշտպանել ընտանեկան բռնության ենթարկված անձանց և պատժել մեղավորներին: Օրենքը սահմանում է բռնության տարբեր ձևերը և ոստիկանության պարտավորությունը՝ կանխարգելել ընտանեկան բռնությունը և պաշտպանել բռնության ենթարկված անձանց: Այդ պարտավորությունը չկատարելու դեպքում դա կհանգեցնի պետության՝ ներառյալ ոստիկանության պատասխանատվությանը: Օրենքը նաև պարտադրում է պետությանը բռնության ենթարկված անձանց համար ապաստարաններ հիմնադրել, անվճար բուժօգնություն տրամադրել և ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ աշխատող բոլոր մասնագետների, այդ թվում՝ ոստիկանության աշխատակիցների համար պարբերաբար վերապատրաստումներ անցկացնել: Օրենքը կարգավորում է ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքումը, ինչպես նաև պահանջում է բարձրացնել իրազեկվածությունը ընտանեկան բռնության կանխարգելման վերաբերյալ:

Օրենքը կարևոր դեր է հատկացնում ոստիկանությանը, հատկապես ընտանեկան բռնության դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումներին: Օրենքում նկարագրված են երեք տեսակի պաշտպանության միջոցներ, որոնցից երկուսը ուղղակիորեն նախաձեռնում և իրականացնում է ոստիկանությունը: Այդ միջոցներից երրորդ տեսակի նախաձեռնողը տուժողներն են կամ տուժողների աջակցության կենտրոնը, սակայն իրականացման համար պատասխանատվությունը դրված է ոստիկանության վրա: Պաշտպանության միջոցները կարևոր են հետագա բռնությունները կանխելու և տուժողներին պաշտպանելու համար:

1. Պաշտպանության միջոցների առաջին տեսակը **Նախագգուշացումն** է, որը նախատեսում է գնահատման ենթակա երեք բաղադրիչներ, որոնք ապահովում են վերջինիս ճիշտ կիրառումը.

1) ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ,
2) կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում և
3) անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն:
Նախագգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորինս չափ սեղմ ժամկետում:

2. Պաշտպանական միջոցների երկրորդ տեսակը **անհետաձգելի միջամտության որոշումն** է. Անհետաձգելի միջամտության որոշման նպատակը անմիջական վտանգի դեպքում ընտանեկան բռնության ենթարկված անձի անվտանգության ապահովումն է՝ վերջինիս և բռնություն գործադրած անձի միջև ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցով:
Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը:

3. Պաշտպանության միջոցների երրորդ տեսակը **պաշտպանական որոշումն** է, որի կիրառման համար դատարան կարող է դիմել ընտանիքում բռնության ենթարկված անձը կամ աջակցության կենտրոնը և այն կարող է կիրառվել միայն դատարանի կողմից՝ անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը գերազանցող ժամկետով (առավելագույնը մեկ տարի):

Հաջորդ բաժինները նկարագրում են, թե ինչպես ոստիկանությունը պետք է արձագանքի ընտանեկան բռնությանը:

II.II. Ոստիկանության արձագանքը

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

- ▶ Ոստիկանությանն ուղղված առաջին ահազանգը չի կատարվում կնոջ նկատմամբ բռնության կամ հարձակման առաջին իսկ դեպքում:
- ▶ Ընտանեկան բռնությունը սովորաբար սաստկանալու միտում ունի:
- ▶ Բռնությունը կարող է տարբեր ձևերով դրսևորվել՝ ոչ միայն ֆիզիկական, այլ նաև սեռական, հոգեբանական, տնտեսական, որոնք բոլորը շատ վնասակար են թե՛ բռնությունից տուժած անձանց և թե՛ երեխաների համար: Նման վնասն անխուսափելիորեն հանգեցնում է նաև ողջ հասարակությանը վնաս հասցնելուն:
- ▶ Կանայք չեն ցանկանում հաղորդում ներկայացնել նման դեպքերի մասին և հաճախ դա կատարում են միայն մեծագույն վախի պահերին:
- ▶ Որոշ դեպքերում տուժողներին կարող են այնպես սպառնալ կամ վախեցնել, որ նրանք դիմեն ինքնապաշտպանության կամ իրենց հերթին բռնություն գործադրեն: Նման դեպքերում ընտանեկան բռնության գեղեցիկ պայմաններում բնույթն ընկալելը և առաջնային բնարարին հայտնաբերելը առանցքային նշանակություն ունեն:
- ▶ Նման դեպքերը «ընտանեկան կոնֆլիկտ» չեն, այլ բնարարների մի շարք, որ կատարում է բնարարը, որպես կանոն՝ տղամարդը, ով ձգտում է ձեռք բերել կամ գործադրել իշխանություն և վերահսկել մեկ այլ անձի, սովորաբար իր սեռական զուգընկերոջը կամ կնոջը:

2. ՇՏԱՊ ՅԵՌԱԽՈՍԱԿԱՆՉԻ ՅԱՄԱԿԱՐԳԸ

- ▶ Յեռախոսականչեր ընդունող բոլոր աշխատակիցները պետք է տեղյակ լինեն ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության այլ ձևերի արձագանքման գործընթացի մասին:
- ▶ Խուսափել արձագանքի ցանկացած փուլում «ընտանեկան կոնֆլիկտ» բառերն օգտագործելուց:
- ▶ Չանգահարողից մանրամասներ հավաքել՝ աջակցելու համար առաջնային արձագանքի խմբի միջամտությանը:
- ▶ Լրացուցիչ տեղեկություններ տրամադրել, թույլ տալով արձագանքող խմբի աշխատակիցներին գնահատել տուժողի և իրենց ռիսկերը (ատրճանակի առկայություն, ծայրահեղ բռնարար անձ և այլն):
- ▶ Յեռախոսագանգն ընդգրկել հրատապ հեռախոսագանգերի ցանկում:
- ▶ Սահմանել արձագանքի առաջնահերթությունը, ապահովելով, որպեսզի արձագանքող խումբն անհապաղ մեկնի միջադեպի վայր:

3. ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ, ՁԱՅՆԱԳՐՈՂ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԵՒ ԶՆՆԻՉԻ ՅԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- ▶ Ապահովել կնոջ և երեխաների անվտանգությունը նրանց գտնվելու վայրում:
- ▶ Պատասխանատվության ենթարկել բռնարարին նրա գործողությունների համար:
- ▶ Օրենքի և ցանկացած քրեական կամ վարչական ընթացակարգի կիրառման համար պատասխանատվություն ստանձնելիս հանդես գալ որպես պետության գործակալներ (և վերաբերվել տուժողներին որպես վկաներ, այլ ոչ որպես դատախազներ)³³:

4. ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԻ ԽՈՒՄԲԸ

Առաջնային արձագանքի խումբը հանցագործության վայր առաջինը ժամանող ոստիկանության աշխատակիցներն են: Նրանց գործողություններից է կախված տուժողի և երեխաների անվտանգությունը և բռնարարին պատասխանատվության ենթարկելը: Ոստիկանության դերը ընտանիքին հաշտեցնելը չէ, այլ հանգամանքների ուսումնասիրությունը և տուժողի պաշտպանությունը:

Ընտանեկան բռնության դեպքերի բարդությունը չպետք է թերագնահատվի, քանի որ դրանք տեղի են ունենում սերտ հարաբերությունների ներքո և սովորաբար տարածվում են երեխաների և ընտանիքի մյուս անդամների վրա: Երբեմն հարաբերությունները արտաքին դիտորդների, նույնիսկ ընկերների համար սովորական են թվում, մինչև որ տեղի չի ունենում որևէ միջադեպ կամ բռնարար, որը տուժողի կողմից այլևս չի կարող անտեսվել: Ոստիկանության կողմից ստացված առաջին ահազանգը սովորաբար բռնության առաջին դեպքից հետո չի կատարվում, քանի որ ընտանեկան բռնությունը միշտ մի շարք բռնարարների արդյունք է, որոնք հաճախ կատարվում են տարիներ շարունակ, մինչև որ տուժողը դիմում է օգնության խնդրանքով: Յաճախ ահազանգը կատարվում է բռնության վերջին և ամենավտանգավոր դրվագի ժամանակ, երբ տուժողը զգում է, որ իր կյանքը վտանգված է, և դիմում է ոստիկանություն:

Ընտանեկան բռնության միջադեպի մասին հաղորդելու դեպքում բռնարարն արդեն իսկ կարող է զգալ, որ փոխհարաբերություններում իր կողմից մշակված և հմտորեն շահարկվող իշխանության և հսկողության մեխանիզմը վտանգված է: Յետևաբար կարևոր է, որ ոստիկանությունը գործի այնպես, որ ապահովի տուժողի և նրա երեխաների անվտանգությունը և բռնարարի նկատմամբ այնպիսի

³³ Եվրոպայի խորհուրդ. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարը Ուկրաինայում, Գործակալական ձեռնարկ, Եվթոնի Ուիլս և Օլգա Կալաշնիկ, Ուկրաինա, 2016թ.:

միջոցներ կիրառի (սույնիսկ կալանք կամ պաշտպանական որոշում), որոնք թույլ կտան վերահսկել տուժողին սպառնացող վտանգը:

Կարևոր է հասկանալ, որ ոստիկանության համար դա կարող է լինել արդյունավետ արձագանքի միակ հնարավորությունը: Եթե ոստիկանությանը չհաջողվի «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» օրենքի պահանջներին համապատասխան ապահովել տուժողի անվտանգությունը, վերջինիս կյանքը կարող է վտանգի ենթարկվել: Տուժողը, գտնելով, որ դա անիմաստ էր կամ որ իրավիճակի վտանգի աստիճանը չի ընկալվել, դժվար թե կրկին հաղորդի բռնության մասին: Թերի արձագանքը կարող է հանգեցնել բռնության սաստկացմանը: Չափազանցություն չի լինի նշել, որ անարդյունավետ արձագանքը կարող է մահացու հետևանքներ ունենալ:

Կարևոր է, որ յուրաքանչյուր հեռախոսազանգ ճշգրիտ կերպով և ամբողջությամբ արձանագրված լինի: Զննությունը պետք է իրականացվի պատշաճ կերպով և չանտեսվի որևէ առկա ապացույց, օրինակ՝ ներկա անձանց վկայությունը, ֆիզիկական վնասվածքները, հասցված վնասը և այլն: Բռնության դադարեցման և տուժողի ու երեխաների անվտանգության վերականգման հանգեցնող գործի նախապատրաստումը պահանջում է մանրակրկիտ, համբերատար և ըմբռնողական մոտեցում:

Այդ պատճառով ոստիկանության աշխատակիցները պետք է անցնեն լավ վերապատրաստում, լավ ղեկավարվեն և նրանց նկատմամբ պետք է իրականացվի արդյունավետ վերահսկողություն: Շատ կարևոր է ապահովել, որ ոստիկանության աշխատակիցներն այս բարդ աշխատանքում օժանդակություն ստանան: Միաժամանակ, առաջնային արձագանքի խումբը պետք է կապ պահպանի այն սոցիալական ծառայությունների և հասարակական կազմակերպությունների հետ, որոնք կարող են անհրաժեշտության դեպքում օգնել, խորհուրդ տալ և օժանդակություն տրամադրել: Տուժողներին հնարավորության դեպքում պետք է ուղղորդել մասնագիտացված հասարակական կազմակերպություն և աջակցության ծառայություններ հետագա օգնության համար:

5. ՆԱԽՔԱՆ ՄԻՋԱԴԵՊԻ ՎԱՅՐ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Մինչև միջադեպի վայր ժամանելը ոստիկանները պետք է նախապատրաստվեն, որպեսզի ժամանելիս պարզեն հետևյալ հարցերը.

- ▶ ահազանգի կամ միջադեպի վայր գնալու պատճառը և միջադեպի հանգամանքները,
- ▶ ներգրավված անձինք և համատեքստը (նրանց թիվը, ցանկացած հատուկ կամ ռիսկային գործոն), գտնվելու վայրը և կոնտակտային տվյալները,
- ▶ իրավախախտի գտնվելու վայրը և նրանից բխող վտանգը (ներառյալ զենքի առկայությունը),
- ▶ վնասվածքների առկայությունը և ծանրությունը,
- ▶ ընտանեկան բռնության (և այլ իրավախախտումների) դեպքերի առկայությունը նախկինում,
- ▶ կողմերից որևէ մեկի նկատմամբ պաշտպանական միջոցների (նախազգուշացում, անհետաձգելի միջամտության որոշում կամ պաշտպանական որոշում) առկայությունը:

Մինչև միջադեպի վայր ժամանելը պետք է հստակեցնել յուրաքանչյուրի առջև դրված խնդիրը՝ ով պետք է հարցաքննի բռնարարին, ով՝ տուժողին, ով՝ զբաղվի երեխաներով և այլն:

6. ՏԱՐԱԾՔ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒԺ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ

Թեև «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» օրենքը տարածք մուտք գործելու համար ուժի գործադրման լրացուցիչ հնարավորություններ չի նախատեսում, սակայն դա երբեմն կարող է արդարացված լինել: Ոստիկանությունը պարտավոր է պաշտպանել քաղաքացիների

կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունը, իրավունքները, ազատությունները և օրինական շահերը քրեական և այլ իրավախախտումներից: Ընտանեկան բռնությունը ոտնձգություն է տուժողների հոգեբանական և ֆիզիկական առողջության, ունեցվածքի և այլ իրավունքների նկատմամբ: Հետևաբար, տարածք մուտք գործելու կամ իրավախախտին զսպելու և հեռացնելու համար ուժի գործադրումը թույլատրելի է:

Հիմնական ուղերձը

— Հաջողությունը հաճախ կախված է ընտանեկան բռնության գործի նախնական փուլում ընդունված որոշումներից և գործողություններից: Նախնական փուլը հետագա քննության հիմքն է, և առաջնային արձագանքի խուճբը այս առումով առանցքային դեր է խաղում:

7. ՄԻՋԱԴԵՊԻ ՎԱՅՐ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Միջադեպի վայրում ոստիկանության կողմից ձեռնարկված առաջին քայլերը շատ կարևոր են և պետք է ներառեն հետևյալը.

- ▶ Առանձնացնել տուժողին և իրավախախտին:
- ▶ Համոզվել, որ բացակայում են բժշկական օգնություն պահանջող վնասվածքներ:
- ▶ Պարզել երեխաների ներկայությունը:
- ▶ Չննել միջադեպի վայրը՝ հետագա հարցումների և գործողությունների հիմքն ապահովելու համար:
- ▶ Բացատրել, թե ինչու է ոստիկանությունը ժամանել և որ իրենք պարտավոր են հետաքննել միջադեպը:
- ▶ Գիտակցել, որ հանցագործը կարող է չիմանա, որ իր զուգընկերը զանգահարել է ոստիկանություն և ապահովել տուժողի անվտանգությունը:
- ▶ Սկսել քննության գործընթացը, մասնավորապես, հարցաքննել ներգրավված անձանց:
- ▶ Գիտակցել, որ իրավախախտը կարող է զայրացած և վտանգավոր լինել: Երբեք չի կարելի անտեսել նրա մոտ զենքի առկայության հնարավորությունը:

8. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ

Ապացույցների ձեռքբերումը խիստ կարևոր է քրեական հետապնդման հիմքերի ստեղծման, ինչպես նաև նախազուգաման կամ պաշտպանական որոշման կայացման համար: Ոստիկանությունը պարտավոր է.

- ▶ Չննել միջադեպի վայրը՝ քրեական հետապնդման հիմքերի ստեղծման և ընտանեկան բռնության ակնհայտ նշանների բացահայտման համար:
- ▶ Ապահովել միջադեպի վայրի վերահսկումը ինչպես ապացույցների պահպանման, այնպես էլ կողմնակի անձանց մուտքը կանխելու համար:
- ▶ Ձեռք բերել վնասվածքների, վնասների ապացույցներ կամ հարաբերությունների բռնի բնույթի մասին վկայող նշաններ: Պետք է կատարել ընդգրկուն վերլուծություն այն մասին, թե ինչը կարող է ապացույց հանդիսանալ (օրինակ՝ հեռախոսը, համակարգիչը, դուրս շարտված առարկաները):
- ▶ Առգրավել, արձանագրել կամ լուսանկարել իրեղեն ապացույցները (օրինակ՝ վնասվածքների լուսանկարները, կտրված կահույքը, արյան հետքերը և այլն):
- ▶ Լրացուցիչ փաստեր ստանալու համար ուսումնասիրել հարևան տարածքը: Չրուցել

հարևանների հետ, զննել հարևանությամբ կայանված ավտոմեքենաները:

- ▶ Յետևել ներկաների պահվածքին և վարքագծին, ուշադրություն դարձնելով բռնի հարաբերություններին բնորոշ դրսևորումների վրա (մանիպուլյացիա, հսկողություն, վախ և այլն):
- ▶ Ամբողջությամբ ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում նախկինում դրսևորված բռնությունների պատմությունը, ուստիկանության կողմից նախկինում ստացված սհազանգերը, ստուգել իրավախախտի մոտ նախկին դատվածությունների առկայությունը:

Վկաները

Ընտանեկան բռնության դեպքերում, ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց անկախ վկայությունը կարող է շատ օգտակար լինել այնպիսի գործի պատրաստման համար, որը կհանգեցնի քրեական հետապնդման իրականացմանը: Յարևանները և շրջապատում հայտնված այլ անձինք կարող են լրացուցիչ տեղեկատվություն տրամադրել և թույլ տան հասկանալ, թե ինչ տեղի է ունեցել և ինչ գործողություն է անհրաժեշտ:

Ոստիկանության աշխատակիցները պետք է.

- ▶ Ականատեսներ փնտրեն շրջակայքում և արձանագրեն նրանց վկայությունը:
- ▶ Յարցնեն տուժողին, թե արդյոք որևէ մեկը կարող է ականատես եղած լինել բռնությանը և գրուցեն այդ մարդկանց հետ:
- ▶ Ապահովեն, որ բոլոր ականատեսների համար հասկանալի լինի քննության գործընթացը և այն, թե արդյոք նրանք պատրաստ են ներկայացնել ապացույցներ իրավական գործընթացի շրջանակում:
- ▶ Ուշադիր վերաբերվեն նրանց, ովքեր ձգտում են պաշտպանել իրավախախտին, հնարավոր է, որ նրանք անկողմնակալ չլինեն:

II.III.ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՅԵՏ ՇՓՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՅԱՐՑԱՔՆՆՈՒՄԸ

Ընդհանուր կանոններ

- ▶ Նման գործերում ներգրավված բոլոր անձինք ունեն իրավունքներ: Անհրաժեշտության և հնարավորության դեպքում դրանք պետք է բացատրվեն հարցաքննության ենթարկվող անձին:
- ▶ Պարզաբանում ենթադրող հարցերը, օրինակ՝ «Կարո՞ղ եք ասել, թե ինչ պատահեց», միշտ ավելի տեղին են, քան պատասխան պարունակող հարցերը, օրինակ՝ «Չ՞ե որ դուք հարվածեցիք նրան»:
- ▶ Վստահությունը շատ կարևոր է: Գործով ներգրավված բոլոր անձինք պետք է ակնկալեն, որ նրանց հետ արդար և պատշաճ կերպով են վարվելու, որ ոստիկանությունը կլսի իրենց բացատրությունը և արդարացիորեն կգործի:
- ▶ Թեև հարցաքննության ենթարկվող անձինք կօգնեն հասկանալ եղելությունը, բայց տեղի ունեցածի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար ցանկալի է ծանոթանալ նախկինում տեղի ունեցած բոլոր իրադարձություններին (օրինակ՝ սհազանգերին, նախազգուշացումներին կամ պաշտպանական միջոցներին) և գնահատել այն ամենը, ինչը տեսանելի է միջադեպի վայրում:

1. ՏՈՒԺՈՂԸ

- ▶ Տուժողը, ամենայն հավանականությամբ, նյարդային, հուզված և վախեցած կլինի, և կանհանգստանա, թե ինչպիսին կլինեն նրա կողմից ուստիկանություն զանգահարելու հետևանքները:
- ▶ Հարգալից վերաբերմունքը կարևոր է: Հանգիստ, բաց և համբերատար հարցաքննության մթնոլորտում անօգնական տուժողն իրեն անկաշկանդ կզգա:
- ▶ Իրավախախտից մեկուսացումը տուժողին ավելի մեծ վստահություն կներշնչի և նա ավելի անկեղծ կպատասխանի հարցերին:
- ▶ Հարցաքննողը պետք է փորձի համոզել տուժողին, որ լավ է պատկերացնում, թե ինչպես է գործում ընտանեկան բռնության դինամիկան (օրինակ այն, որ բռնարարը կարող է մանիպուլյատիվ և համոզիչ լինել, որ քիչ հավանական է, որ դա բռնության առաջին դեպքը լինի):
- ▶ Պետք է հատուկ նշել, որ տուժողի անվտանգությունն առաջնային նշանակություն ունի և պարզել, թե արդյոք ներկա են երեխաներ, որոնց մասին նույնպես պետք է հոգ տանեն:
- ▶ Ցանկացած դիտարկում թույլ կտա ուստիկանությանը նպատակային և տրամաբանական հարցեր տալ, սակայն այդ ամենը պետք է կատարվի նրբանկատորեն:
- ▶ Հիշեք, որ ռիսկի գնահատումը (որը պարտադիր է) թույլ կտա նաև լրացնել կատարվածի մասին բացերը և այդ կանոնները պահպանելու դեպքում գործն ավելի հեշտ կլինի հասցնել ավարտին:
- ▶ Արդյոք տուժողը ցանկանում է լքել տունը: Եթե նա ցանկանում է, ապա օգնեք նրան հեռանալ տնից իր երեխաների հետ միասին: Այդ դեպքում կարող է անհրաժեշտ լինել կապիաստատել տուժողի ընկերների/ընտանիքի հետ կամ ուղեկցել նրան ապաստարան:

2. ԵՐԵՒԱՆԵՐԸ (ԵԹԵ ՆԵՐԿԱ ԵՆ)

- ▶ Հիշեք, որ ընտանեկան բռնության դեպքերում երեխաները շատ խոցելի են: Այն, ինչին նրանք ակնատես են լինում, կարող է նրանց վրա անդառնալի հետք թողնել հետագա կյանքի ընթացքում:
- ▶ Հաճախ երեխաները կարող են գտնվել իրենց ննջասենյակում կամ այլ սենյակում: Շատ հազվադեպ է լինում, որ բռնության միջադեպի ժամանակ երեխաները քնած լինեն, նույնիսկ, եթե ծնողներին այդպես է թվում: Դուրս բերեք երեխաներին, բայց եթե իսկապես քնած են, մի խանգարեք նրանց, եթե դա անհրաժեշտ չէ: Հիշեք, որ նրանք նույնպես կարող են տուժած լինել բռնությունից և դա նույնպես պետք է ստուգվի:
- ▶ Շատ հավանական է, որ նրանք կիսեն իրենց հավատարմությունը ծնողների միջև:
- ▶ Երեխաների հետ զրուցող ուստիկանության աշխատակիցը պետք է ամենահմուտը լինի ներկաների մեջ երեխաների հետ վարվելու հարցում:
- ▶ Համոզվեք, որ նրանք գտնվում են անվտանգ վայրում, ցանկալի է այնպիսի անձի կողքին, ով բռնության մեջ ներգրավված չի եղել և կարող է հանգստացնել նրանց և պաշտպանել նրանց իրավունքները:
- ▶ Նույնիսկ եթե երեխաները փոքր են, ուստիկանության աշխատակիցները պետք է բացատրեն, թե ովքեր են իրենք և ինչպես են փորձում պարզել եղելությունը երեխաներին պարզ հասկացրեք, որ իրենց ոչինչ չի սպառնում և, որ նրանք ոչ մի սխալ բան չեն արել (երեխաներին հաճախ թվում է, որ բռնությունը իրենց մեղքով է տեղի ունեցել):
- ▶ Երեխաներին չպետք է առաջարկել բացատրել իրենց ծնողների արարքները և նրանց մոտ չպետք է այնպիսի կարծիք ձևավորվի, որ իրենք են մեղավոր տեղի ունեցող իրադարձությունների համար (օրինակ, տուժողի կողմից տունը լքելու, բողոքը հետ վերցնելու կամ իրավախախտին պատասխանատվության կանչելու):

3. ԻՐԱՎԱԽԱԽՏՈՂ

- ▶ Իրավախախտը կարող է վտանգ ներկայացնել ինչպես իր, այնպես էլ ուրիշների համար: Ապահովեք, որ այդ վտանգները հաշվի առնվեն և վերահսկվեն:
- ▶ Համոզվեք, որ իրավախախտի հետ առնչվող անձինք տեղյակ են նրա նկատմամբ նախկինում ընդունված դատավճիռների և պաշտպանական որոշումների մասին:
- ▶ Իրավախախտին հարցաքննեք տուժողից և երեխաներից մեկուսացված վայրում:
- ▶ Համոզվեք, որ իրավախախտը գիտակցում է, որ ընտանեկան բռնության դեպքում ոստիկանությունը պարտավոր է գործել (օրինակ՝ կիրառել նախազգուշացում, անհետաձգելի միջամտության որոշում, կալանք) և, որ նա պարտավոր է ենթարկվել ոստիկանության հրահանգներին, այդ թվում՝ տնից հեռանալու և տուժողի հետ կապ չպահպանելու վերաբերյալ:
- ▶ (Իրավախախտը կարող է որոշ ժամանակ անց բողոքարկել այդ որոշումները, սակայն մինչ այդ պարտավոր է հետևել դրանց):

4. ՏՈՒԺՈՂՆԵՐԻՆ, ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԽԱԽՏՆԵՐԻՆ ՀԱՐՑԱՔՆՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Լավագույն տարբերակն այն է, որ մինչև ընտանեկան բռնության մասնակիցների հարցաքննությունը միջադեպի բոլոր հանգամանքները լինեն հստակեցված: Փաստերի ամկայությունը թույլ է տալիս պարզել, թե ինչ է տեղի ունեցել, նպաստում է հարցաքննությանը և նվազեցնում է զուտ տուժողի պատասխանատվությամբ պաշտպանական որևէ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը: Տուժողները հաճախ չեն ցանկանում, որպեսզի բռնարարի նկատմամբ կիրառվի որևէ իրավական պաշտպանության միջոց, այլ պարզապես ցանկանում են, որ բռնությունները դադարեցվեն և իրենց վտանգ չսպառնա: Այդ իսկ պատճառով ապացույցների առանձին հավաքագրումը կարևոր է, բայց դա չի վերացնում արդյունավետ հարցաքննության անցկացման անհրաժեշտությունը: Հարցաքննությունն իրականացնելիս պետք է հաշվի առնել հետևյալը.

- ▶ Հարցազրույցի մասնակիցները կատարվածը ներկայացնում են սեփական տեսանկյունից: Ոստիկանության աշխատակցի պարտականությունը տեղեկատվության և ապացույցների հավաքագրումն է, որոնք թույլ կտան հիմնավորված գնահատական տալ կատարվածին և որոշում կայացնել անհրաժեշտ գործողության վերաբերյալ :
- ▶ Հարցաքննվողները կարող են սխալ ներկայացնել իրադարձությունները, սակայն դա չի նշանակում, որ նրանք ստում են:
- ▶ Տվեք բացատրություն ակնկալող (բաց) հարցեր, օրինակ՝ «Ի՞նչ է այստեղ տեղի ունեցել»:
- ▶ Խուսափեք այն հարցերից, որոնց պատասխանը կարող է լինել «այո» կամ «ոչ»:
- ▶ Տուժողին հարցաքննելիս.
 - Պարզել, թե արդյոք դա բռնության առաջին դեպքն է:
 - Ճշտել բռնարարի տևողությունը, մանրամասները և ձևը:
 - Խնդրել ցույց տալ վնասվածքները (դա անթույլատրելի է մարմնի ինտիմ մասերում վնասվածքի ամկայության դեպքում կամ տուժողը այն կարող է ցույց տալ միայն իր սեռի աշխատակցին):
 - Հարգել տուժողի անձը, ներառյալ նրա անվտանգության և գաղտնիության իրավունքը:
 - Դիտարկել բժշկական օգնություն ստանալու անհրաժեշտությունը:

Խուսափեք բացասական կամ անօգուտ հարցերից

- ▶ Բոլոր այն հարցերից, որոնք մեղադրական են հնչում տուժողի համար «Ինչու՞ ուղղակի չիեռացաք», «Ինչու՞ չկատարեցիք այն, ինչ նա ուզում էր» , «Ինչպե՞ս կարող էիք ձեր երեխաներին չպաշտպանել այդ անձնավորությունից»:
- ▶ Բոլոր այն հարցերից, որոնք հաջորդ քայլերի համար պատասխանատվությունը դնում են տուժողի վրա. «Ինչ էք դուք ուզում անել», «Ուզում եք, որ նրան ձերբակալեն» (հիշեք, որ պետությունն է պարտավոր ապահովել քաղաքացիների անվտանգությունը):
- ▶ Բոլոր այն հարցերից, որոնք կարող են երկիմաստ կամ ոչ հստակ լինել. «Ամեն ինչ նորմալ է», «Կարծում եք, որ սրանով ամեն ինչին վերջ կդրվի»:

Հարցաքննության լավ մեթոդները.

- ▶ Նախապես որոշեք, թե ինչ պետք է հարցնեք և հարցերը տվեք ըստ այդ պլանի:
- ▶ Հարցաքննության համար գտեք լավագույն վայրը:
- ▶ Բացատրություն ակնկալող (բաց) հարցերը ավելի արդյունավետ են:
- ▶ Սառնասրտությունը և վստահությունը, անշուշտ, կարևոր են, քանի որ հարցաքննվողները ավելի լավ են պատասխանում այն անձին, ով գիտի օրենքը և դրա կիրառման եղանակները, և կատարում է վստահությամբ և կարեկցանքով:
- ▶ Ոստիկանները դատավորներ չեն, նրանց դերը տուժողների համար անվտանգություն ապահովումն է, իրավախախտին պատասխանատվության ենթարկելը և անհրաժեշտության դեպքում պաշտպանական որոշումներ կիրառելը: Ոստիկանության աշխատակիցների անձնական տեսակետները, համոզմունքները և կարծիքները չպետք է միջամտեն հարցաքննության ընթացքին:
- ▶ Կապ հաստատեք Ձեր և հարցաքննվող անձի միջև: Դիմեք նրան անունով, պահպանեք աչքի կոնտակտը, նրան խոսելու հնարավորություն տվեք, գլխով հաստատական շարժումներ արեք և ժամանակ հատկացրեք քննարկումների համար:
- ▶ Հարցաքննվող անձինք հաճախ հուզված են լինում: Նրանք կարող են առանց պատճառի բարկանալ, արտասվել կամ ինքնամիտի դառնալ: Նման դեպքերում հարցաքննություն իրականացնողը պետք է ցուցաբերի համբերատարություն և հանդուրժողականություն և արձագանքելիս չպետք է արտահայտի սեփական զգացմունքները: Ոստիկանության աշխատակիցն իր աշխատանքն է կատարում, իսկ հարցաքննվողը գտնվում է իր կյանքում առաջացած խառնաշփոթ իրավիճակի ազդեցության տակ և, անշուշտ, իր վարքով կարող է ցույց տալ, որ վշտացած է:
- ▶ Որոշ վկաներ հեշտությամբ ուղղորդվում են և հեշտությամբ հարմարեցնում են իրենց պատասխանը հարցաքննող անձի ակնկալիքներին: Վերջինս պետք է իմանա նման հնարավորության մասին և հարցաքննության ընթացքում խուսափի հարցերի միջոցով դեպի ակնկալվող պատասխանն ուղղորդելուց:
- ▶ Կրկնությունը, հավանաբար, անհրաժեշտ է, քանի որ օրենսդրության բարդությունը և պահին բնորոշ հուզվածությունը չեն նպաստում միջադեպին ներգրավված անձանց կողմից հարցերի արագ ընկալմանը:
- ▶ Բոլոր մասնակիցների ժեստերին հետևելը կարևոր է, միևնույն ժամանակ ոստիկանը չի կարող արտահայտել իր ներքին զգացմունքները: Հարցաքննության ընթացքում հարցաքննողի պրոֆեսիոնալ կեցվածքը հարցաքննության լավ արդյունքի նախապայմանն է:
- ▶ Չափազանց կարևոր է հասկանալ տուժողի և իրավախախտի շարժառիթները: Դա թույլ է տալիս ճիշտ հարցադրումներ անել, վերլուծել պատասխանների անկեղծությունը և համապատասխան քայլեր ձեռնարկել:

Երեխաների հարցաքննությունը

Երեխաների հարցաքննությունը, անկախ դրա տևողությունից, բարձր հմտություն է պահանջում: Երեխաները միշտ չէ, որ կարողանում են հասկանալ, թե ինչ է տեղի ունենում իրենց կամ իրենց ծնողների հետ, և ընտանիքում ցանկացած բռնության կամ ոտնձգության հետևանքները կարող են դանդաղեցնել (կամ արագացնել) նրանց հետագա զարգացումը: Ցանկալի է, որ հարցաքննությունն անցկացվի հատուկ վերապատրաստում անցած մասնագետների կողմից, սակայն կարող է անհրաժեշտ լինել, որպեսզի ոստիկանության աշխատակիցը մի փոքր զրուցի երեխաների հետ՝ որոշ հիմնարար նշանակություն ունեցող փաստեր պարզելու համար: Թեև վերոշարադրյալ կանոնները վերաբերում են նաև երեխաների հարցաքննություններին, սակայն անկաշկանդ և բարեկամական մթնոլորտում բաց, ընկերական ոճի զրույցի արդյունավետության և երեխային վնաս չպատճառելու հավանականությունը շատ ավելի բարձր է: Պետք է ակնկալել, որ հարցազրույցի ժամանակ երեխաները ծայրահեղ զգացմունքներ կարող են արտահայտել և արձագանքը պետք է լինի առանց գնահատականների ըմբռնումը:

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ Հայաստանում դեռահաս տղաները հակված են հոր կողմն ընդունելու, մեղադրելու մորը և նույնիսկ ագրեսիվ վարքագիծ դրսևորելու մոր նկատմամբ: Դրա պատճառը, ամենայն հավանականությամբ, նման վարքագիծը սեփական ընտանիքում ձեռք բերելն է:

5. ԻՐԱՎԱԽԱՆՏԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Ընտանեկան բռնություն գործադրող անձինք հաճախ մանիպուլյատիվ են և նույնիսկ կարող են ողջամիտ թվալ այն անձանց համար, ովքեր զբաղվում են այդ հարցերի արձագանքման ու քննության հարցերով: Նրանց կողմից իրենց մեղքի ընդունումը քիչ հավանական է: Փոխարենը նրանք կփորձեն մեղադրել տուժողին: Նրանք կպնդեն, որ գործել են ինքնապաշտպանության համար կամ տուժողը «ստիպել է դա անել» կամ, որ պարզապես չեն կարողանում զսպել իրենց, երբ հոգնած կամ խմած են:

Ոստիկանությունը պետք է հակադարձի բռնարարի՝ իր անձի կամ իր իրավիճակի նկատմամբ համակրանք ձեռք բերելու փորձերին: Պետք է միշտ հիշել, որ տուժողը սովորաբար տառապում է երկար ժամանակ, շատ դեպքերում ենթարկվում է ոտնձգության և իր կյանքը վախի մեջ է անցկացնում: Արտառոց չեն այն դեպքերը, երբ տուժողները խոստովանում են, որ «նրանք կարող էին ավելի լավ պահել իրենց» կամ էլ, որ նրանք բարկացրել էին հանցագործին՝ փորձելով նվազեցնել նրա բռնարարի ծանրությունը:

Բռնության համար պատասխանատվությունը կրում է բռնարարը և ցանկացած բացասական հետևանք հանդիսանում է նրա գործողությունների անմիջական արդյունք: Ոստիկանության դերը չափազանց կարևոր է տուժողի անվտանգության ապահովման և բռնարարի՝ իր արարքների համար պատասխանատվությունից խուսափելը կանխելու գործում: Բռնության դեմ պայքարի լավագույն ուղին ոստիկանության վճռական գործողությունն է, որը հիմնված է բռնարարի վերաբերյալ վերոնշյալ ընկալման, և վերջինիս՝ մեղքը ժխտելու փորձերին հակադարձելու վրա:

6. ԻՐԱՎԱԽԱՆՏԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ոստիկանության կողմից հստակ և պատշաճ գործողություններ չկատարելու դեպքում իրավախախտները կխուսափեն իրենց գործողությունների համար պատասխանատվությունից: Բացի այդ, կծախողվի տուժողի աստիճանական վերախնտեգրումը անվտանգ և արդյունավետ միջավայրում, բռնությունը կշարունակվի և, ի վերջո, հասարակությունը չի փոփոխվի և չի բարելավվի:

Տուժողը չպետք է պատասխանատու լինի այն բանի համար, որ հանցագործը պատասխանատվության ենթարկվի իր արարքի համար: Դա պետության և այդ գործառույթի իրականացման համար պետության կողմից լիազորված մարմինների, այդ թվում՝ ոստիկանության պարտականությունն է: Ընտանեկան բռնությունը քրեորեն պատժելի արարք է, որը յուրաքանչյուր դեպքում պետք է մանրակրկիտ և

արդյունավետ քննվի: Այն «ընտանեկան գործ» չէ, որի նպատակը հաշտեցնելն է: Նպատակը բռնությանը վերջ դնելն է: Չնայած այն հանգամանքին, որ որոշ տուժողներ նախընտրում են մնալ բռնարարի հետ, սակայն դա չի վերացնում ոստիկանության պարտականությունը ապահովելու, որ տուժողի անվտանգությունը առաջնային նշանակություն ունենա և նա վտանգված չլինի օրենքով սահմանված գործողությունների բացակայության պատճառով: Սա նշանակում է, որ անհրաժեշտության դեպքում պետք է իրականացվի քրեական հետապնդում կամ կիրառվեն պաշտպանական որոշումներ:

II.IV. Լրացուցիչ դիտարկումներ, որոնք պետք է հաշվի առնել ընտանեկան բռնությանն արձագանքելիս

1. ԻՆՔՆԱԿՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրավախախտները հաճախ մարդկանց մոլորության մեջ գցելու համար պնդում են, որ իրենց գործողությունները ինքնապաշտպանության նպատակ են ունեցել: Մանրակրկիտ հետաքննությունը կփաստի եղելությունը, սակայն ոստիկանության աշխատակիցները պետք է ծանոթ լինեն ինքնապաշտպանության սահմանմանը, քանի որ երբեմն լինում են այնպիսի իրավիճակներ, երբ տուժողը անհրաժեշտ է համարում պաշտպանել իրեն կամ իր երեխաներին: Ինքնապաշտպանությունը սահմանվում է որպես իր կամ մեկ այլ անձի՝ մարմնական վնասվածքներ ստանալու ակնհայտ վտանգը կանխելու կամ դրանից խուսափելու նպատակով համաչափ ուժի կիրառում: Ինքնապաշտպանության համար համաչափ ուժի կիրառումը չի ներառում վրեժխնդրություն փնտրելը կամ դիմացինին պատժելը:

2. ՀԻՄՆԱԿԱՆ (ՍԿԶԲՆԱԿԱՆ) ԲՈՒՆԱՐԱՐԻ ԲԱՑԱՅԱԶՅՏՈՒՄԸ

Շատ դեպքերում բռնարարները հակադարձ մեղադրանքներ են հնչեցնում տուժողների նկատմամբ: Ոստիկանության պարտականությունն է տուժողին տարբերակել բռնարարից և ապահովել տուժողի անվտանգությունը, կանխարգելելով հետագա բռնության դեպքերը: Պարզելու համար, թե ով է բռնարարը և ով տուժողը, ոստիկանության աշխատակիցները պետք է հաշվի առնեն հետևյալը.

- ▶ Կողմի վնասվածքների ծանրությունը
- ▶ Ուժի կիրառման և ահաբեկման փաստը
- ▶ Կողմերից որևէ մեկի՝ նախկինում ընտանեկան բռնություն գործադրելու դեպքերը
- ▶ Կողմերից որևէ մեկի կողմից՝ հետագայում վնաս պատճառելու հավանականությունը
- ▶ Կողմերից յուրաքանչյուրի ֆիզիկական ուժը
- ▶ Ով է վախեցած
- ▶ Բռնության նպատակը

3. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ոստիկանությունը ընտանեկան բռնության դեպքեր քննելիս պետք է պահպանի գաղտնիությունը: Եթե տուժողները վստահ չեն, որ ոստիկանությունը կպահպանի գործի գաղտնիությունը, ապա նրանց կողմից միջադեպի մասին հաղորդելու կամ հետագա քրեական հետապնդման գործընթացին աջակցելու հավանականությունն ավելի քիչ է: Ավելի կարևոր է այն, որ վստահության կորուստը տուժողի մոտ առաջացնում է «կրկնակի վիկտիմիզացիա» և խափանում է հոգեկան հավասարակշռության վերականգնումը:

Տուժողներն ունեն լաված լինելու իրավունք, նրանց պետք է հավատալ և նրանց գործը քննելիս պահպանել եթիկայի կանոնները: Սա նշանակում է, որ տուժողի անձնական կյանքին վերաբերող մանրամասները չպետք է մատչելի լինեն քննության հետ չառնչվող որևէ անձի համար:

Ինչպես նշված է Եվրոպայի ԽՆՏԻՊԻՊԻ կողմից մշակված Բուլղարիայի ոստիկանության դասընթացավարների վերապատրաստման մասին ձեռնարկում³⁴, ողջ գործընթացում գաղտնիության պահպանումը ներառում է հետևյալը՝

- ▶ Մի հարցրեք տուժողին նրա անձնական կյանքի մասին, եթե դա անմիջականորեն կապված չէ ենթադրյալ հանցագործության դեպքի հետ, չի առնչվում դրան և անհրաժեշտ չէ վերջինիս քննության համար:
- ▶ Հավաքեք միայն քննության հետ անմիջական կապ ունեցող փաստեր և տեղեկություններ:
- ▶ Տուժողի և վկաների անունը, հասցեն և այլ անձնական տեղեկությունները առանց տուժողի տեղեկացված համաձայնության չպետք է տրամադրվեն լրատվամիջոցներին:
- ▶ Հիվանդանոցում բժշկական զննումը պետք է անցկացվի պրոֆեսիոնալ կերպով, անվտանգ և առանձնացված պայմաններում և կին աշխատակիցների կողմից: Բժշկական զննումից ստացված տվյալները պետք է հավաքվեն որպես դատաբժշկական ապացույցներ:
- ▶ Ապահովեք, որ ոստիկանության կողմից կազմված փաստաթղթերը և զեկույցները ուսումնասիրվեն միայն արդարադատության և իրավապահ մարմինների այն աշխատակիցների կողմից, որոնք ուղղակիորեն ներգրավված են գործին:

4. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ԱՆՁԱՆՑ (ՏՈՒԺՈՂՆԵՐԻ, ԻՐԱՎԱԽԱՆՏՆԵՐԻ) ՄԻՋԵՎ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԿԱՆ ՀԱՐՎԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ

Ոստիկանության առաջնային արձագանքի խմբի աշխատակիցները և ոստիկանական կառույցի մյուս անդամները որոշ դեպքերում կարող են ճանաչել իրավախախտին և կողմակալություն ցուցաբերել կամ հրաժարվել քայլեր ձեռնարկելուց: Դա հատկապես կարող է ներհատուկ լինել Հայաստանի գյուղական վայրերին: Կարևոր է, որպեսզի ոստիկանության աշխատակիցները գիտակցեն նման գործերին վերաբերող կիրառելի քաղաքականության պահանջները չխախտելու կարևորությունը, այլ ոչ թե իրավախախտի հետ անձնական կապն օգտագործեն խնդիրը ոչ պաշտոնական եղանակով հարթելու կամ գործն ընդհանրապես մերժելու համար: Յուրաքանչյուր գործում առաջնայինը պետք է լինի տուժողի անվտանգությունը և իր գործողությունների համար իրավախախտի պատասխանատվությունը:

5. ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

“Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին” նոր օրենքի և դրանից բխող պրակտիկայի հաջողության նախապայմանը այդ հարցին ոստիկանության բարձրաստիճանի ղեկավարության կողմից տրվող առաջնահերթությունն է: Ոստիկանության բարձրաստիճանի ղեկավարության կողմից ընտանեկան բռնության նկատմամբ մշակված մոտեցումը պետք է առաջնահերթ համարվի: Առաջնորդության կարևոր կողմը վերահսկողությունն է: Ոստիկանության բարձրաստիճանի ղեկավարները պետք է ապահովեն, որ իրենց ենթակաները լիովին պատկերացնեն օրենքի անվերապահ կիրառման կարևորությունը: Գործընթացի իրականացման համար պատասխանատու անձինք պետք է

³⁴ Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեպքերին առնչվելիս Բուլղարիայի ոստիկանության մասնագիտական կարողությունների զարգացումը, Աննա Կոնստանցա Բալդրի, 2016թ., էջ 48:

հասկանան, որ իրենց աշխատանքը վերահսկվելու է, սխալները հայտնաբերվելու և շտկվելու են, իսկ լավ աշխատանքը ճանաչվելու և բաշխվելու է:

II.V. Ոստիկանության պաշտպանական արձագանքը

1. ՏՈՒԺՈՂԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՄՈՒՄԸ ԵՒ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՅՈՒՄԸ

Յուրաքանչյուր ընտանեկան բռնության գործով ոստիկանությունը պարտավոր է անցկացնել ռիսկերի գնահատում տուժողի մասնակցությամբ: Ռիսկերի գնահատման նպատակն է ամփոփել բռնության սպառնալիքը, գնահատել դրա լրջությունը և կանխել հնարավոր հետևանքները: Անհատական մակարդակում ռիսկերի գնահատման հիմնական նպատակն է ոչ միայն կանխատեսել, այլ նաև խափանել հնարավոր բռնության գործադրումը: **Ռիսկերի գնահատումը պետք է իրականացվի շարունակաբար:** Արդյունքների հիման վրա կարող են և պետք է ձեռնարկվեն բռնության ռիսկը նվազեցնելու ուղղված միջոցներ: Ռիսկի գնահատման համակարգված և մասնագիտական գործիքների կիրառումը ոստիկանությանը թույլ կտա բացահայտել անկանխատեսելի հետևանքներով հղի և ծայրահեղ վտանգավոր վարքագիծը:

Ռիսկերի գնահատումը կարևոր է ընտանեկան բռնության բոլոր դեպքերում, քանի որ այն սահմանում է տուժողին սպառնացող ռիսկի մակարդակը: Այն օգնում է պարզել իրավախախտից բխող վտանգի աստիճանը և այն, թե արդյոք պահանջվում է հրատապ գործողություն: Ինչպես նաև Ռիսկերի գնահատումը նաև ուղեկիշ է հանդիսանում այն անձանց և ծառայությունների համար, որոնք մասնագիտական առումով աջակցում են տուժողին կամ առնչվում են նրա հետ: Հաճախ այն բնութագրվում է որպես սպանությունների կանխման գործընթաց, ընդ որում՝ որքան ավելի բարձր է ռիսկի մակարդակը, այնքան ավելի հավանական է, որ տուժողը հետագայում կարող է զրկվել կյանքից:

Հայաստանում ռիսկերի գնահատման նպատակը երկակի է՝ տուժողին սպառնացող ռիսկի գնահատում և օգնության հասնելու համար ոստիկանության կողմից ձեռնարկվելիք քայլերի սահմանում (մասնավորապես, անհետաձգելի միջամտության որոշման պարագայում): Ոստիկանության կամ ճգնաժամային կենտրոնի կողմից իրականացվող ռիսկերի գնահատման արդյունքները կարող են և պետք է օգտագործվեն նաև դատարանների կողմից՝ ընտանեկան բռնության դեպքերի, ամուսնալուծության և խնամակալության հարցերով դատավարությունների ժամանակ:

Ռիսկերի գնահատման ցանկում ներառված հարցերը թույլ են տալիս որոշել, թե որ խմբին պետք է դասել ռիսկի մակարդակը, ընդ որում՝ հարցերին տրված դրական պատասխանների բարձր թիվը մատնանշում է լուրջ մարմնական վնասվածք հասցնելու կամ սպանության ավելի մեծ վտանգը: Կարևոր է նշել, սակայն, որ սպանությունը կարող է տեղի ունենալ մինչև վտանգավոր վարքագծի բացահայտումը: Նաև, անկախ ռիսկային գործոնների առկայությունից, որևէ խոչընդոտ առկա չէ ոստիկանության աշխատակցի կամ գործի հետ առնչվող որևէ այլ անձի համար սեփական գնահատման հիման վրա որոշում կայացնելու տուժողին լուրջ վտանգ սպառնալու մասին: Եթե այս հարցերից նվազագույնը 10-ին տրվել է դրական պատասխան, ապա տուժողը բարձր ռիսկայնության գտնվում է, և պետք է կայացվի անհետաձգելի միջամտության որոշում (պաշտպանական որոշումներն ավելի մանրամասն քննարկվում են ստորև):

Հիմնական ուղերձը

— Տուժողի սեփական գնահատականը իրավախախտի կողմից սպառնացող վտանգի ռիսկի մակարդակի մասին, որպես կանոն, շատ ճշգրիտ է: Եթե տուժողը վախենում է իր կյանքի համար կամ ասում է. «Նա ինձ կսպանի», ապա դրան պետք է ՇԱՏ լուրջ վերաբերվել:

Բացի այդ, սպանության դեպքերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երբ սպանալիքներն ավելի հաճախակի են դառնում և ավելի շատ մանրամասներ են պարունակում, սպանությունը ավելի հավանական է: Ռիսկերի գնահատման վերաբերյալ դրական պատասխանների քանակից բացի, ուշադրություն պետք է դարձնել սպանալիքների հաճախականությանը, մանրամասներին և բնույթին:

Նախքան ռիսկերի գնահատման հարցերին անդրադառնալը, տուժողին բացատրեք այդ հարցերի նպատակը: Հարցերը տվեք հանգիստ և առանց շտապելու: Հայաստանում կիրառվում են երկու տարբեր ցանկեր: Հավելված 5-ը ոստիկանության տարբերակն է, որն իր ներկայիս տեսքով ոչ լիովին է համապատասխանում իրավիճակի ծանրության և բռնության ռիսկերի գնահատման նպատակին, իսկ Հավելված 6-ը (օգտագործվում է ՀԿ-ների կողմից) համապատասխանում է միջազգային չափանիշներին և ավելի հուսալի ձևով է գնահատում ռիսկի մակարդակը:

Երբ տուժողը ճանաչվում է որպես բարձր ռիսկայնության գոտում գտնվող ոստիկանությունը պետք է անհետաձգելի միջամտության որոշում կայացնի և բացատրի տուժողին, որ վերջինս կարող է նաև դատարանի միջոցով պաշտպանական որոշում ստանալ: Հնարավոր հանցագործության քննությունն նույնպես պետք է ջանասիրաբար և արագորեն կատարվի, որպեսզի անհրաժեշտության դեպքում իրականացվի քրեական հետապնդում: Բարձր ռիսկի տակ գտնվող տուժողներին պետք է ուղղորդել ապաստարան կամ անվտանգության պլան կազմելու մասնագիտական փորձ ունեցող հասարակական կազմակերպություն (տե՛ս Հավելված 3), որը կարող է տեղեկատվություն տրամադրել տուժողի պաշտպանության հնարավորությունների և համապատասխան ծառայությունների մասին:

Ոստիկանությունը միշտ պետք է ունենա աջակցման ծառայությունների համապատասխան կոնտակտային տվյալները, այդ թվում՝ ընտանեկան բռնության հարցերով զբաղվող որևէ ՀԿ-ի, օրինակ՝ կանանց աջակցության կենտրոնի թեժ գծի հեռախոսահամարը՝ 099 88 78 08:

2. ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ, ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ

Նախաքննությունը և հարցաքննությունները ավարտելուց, փաստերը հավաքելուց և ռիսկի գնահատումն անցկացնելուց հետո ոստիկանության աշխատակիցը պետք է որոշի, թե ինչպես պետք է առավել հուսալի ձևով պաշտպանել տուժողին:

“Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին” օրենքը պահանջում է, որ ոստիկանությունը հատուկ դեպքերում կիրառի նախազգուշացում կամ անհետաձգելի միջամտության որոշում կայացնի: Պաշտպանական որոշումները նոր Օրենքի մասն են կազմում, դրանք հատուկ ձևով են կայացվում, որը ներկայացվում է ստորև:

Նախազգուշացումը

Պաշտպանության միջոցների առաջին տեսակը նախազգուշացումն է, որը նախատեսում է միջոցի ճիշտ կիրառումն ապահովող գնահատման երեք բաղադրիչներ.

1. ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ,
2. կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում և
3. անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն:

Նախագգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում: Ոստիկանությունը պետք է համոզվի, որ բռնարարի կողմից դա բռնության առաջին դեպքն է: Վախը կարող է դրդել բռնությունից տուժած անձին ոչ ամբողջովին ներկայացնել նաև նախկինում տեղի ունեցած դեպքերը: Եթե նախագգուշացումը կիրառվում է, երբ բռնությունն ընտանիքում արդեն սովորական է դարձել, ապա ոստիկանության հեռանալուց հետո ընտանիքում կարող է չափազանց վտանգավոր իրավիճակ առաջանալ և տուժողը կրկին կարող է բռնության ենթարկվել, ավելին՝ նրան կարող է մահվան վտանգ սպառնալ:

Անհետաձգելի միջամտության որոշումը

Այն դեպքում, եթե բռնության հետ կապված միջադեպն առաջին անգամ չէ, որ տեղի է ունենում (եթե տուժողը զանգահարել է ոստիկանություն, դա գրեթե բացառվում է), և եթե ռիսկի գնահատման պատասխանները բարձր վտանգի մասին են վկայում, ապա ոստիկանությունը պետք է կայացնի անհետաձգելի միջամտության որոշում:

Ոստիկանությունը պետք է բացատրի տուժողին և կասկածյալին, թե ինչ է նշանակում անհետաձգելի միջամտության որոշումը և ինչ է այն նախատեսում: Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել **քսան օրը** և այդ ընթացքում բռնություն գործադրած անձը պետք է հեռանա ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից, նույնիսկ եթե դա իր սեփականությունն է, չհաղորդակցվի ընտանիքում բռնության ենթարկված անձի կամ երեխաների հետ հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով կամ որևէ երրորդ անձի միջոցով, ինչպես նաև չի կարող ոստիկանության կողմից սահմանված հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին և երեխաներին: Ոստիկանությունը պետք է բացատրի տուժողին և կասկածյալին, թե ինչ է տեղի ունենում անհետաձգելի միջամտության որոշման պահանջների խախտման դեպքում և, որ ցանկացած նման խախտման դեպքում տուժողը պետք է անմիջապես զանգահարի ոստիկանություն:

“Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին” օրենքի համաձայն, **ոստիկանությունը կարող է տուժողի կյանքը և առողջությունը պաշտպանելու համար անհետաձգելի միջամտության որոշում կայացնել**. 1) եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել և 2) առկա է բռնության կրկնության կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգ: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախագգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:

Անհետաձգելի միջամտության որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները.

1. հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը.
2. արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա ինամքի տակ գտնվող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր.
3. արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա ինամքի տակ գտնվող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի առումով: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը.
4. մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը: Այս սահմանափակումը կիրառելիս որոշման մասին

իրագրելու պահին ընտանիքում բռնություն գործադրած անձի տիրապետման տակ զենք լինելու դեպքում նա այն անհապաղ հանձնում է որոշումը կայացրած ոստիկանության ծառայողին:

5. արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց հետ:

Նշված սահմանափակումները կարող են կիրառվել առանձին կամ համակցության մեջ՝ նշելով դրանց կատարման համար միևնույն կամ տարբեր ժամկետներ:

Հիմնական ուղերձը

— Ցանկացած պաշտպանական միջոցի կիրառումը չի խոչընդոտում օրենքով նախատեսված քրեական գործընթացների և քրեական հետապնդումների իրականացմանը:

Տուժողի հետ քննարկեք նրա պաշտպանության լավագույն տարբերակը: Հարցրեք, թե արդյոք նրան պետք է ուղեկցել ընկերոջ կամ ընտանիքի անդամի տուն՝ մի վայր, որտեղ բռնություն գործադրած անձը չի կարող կապվել նրա հետ: Նման դեպքում անհետաձգելի միջամտության որոշման մեջ պետք է նշվի տուժողի նոր բնակության վայրը:

Անհետաձգելի միջամտության որոշման (կամ նախագզուշացման) պատճենները տրվում են իրավախախտին և տուժողին: Անհետաձգելի միջամտության որոշումը ուժի մեջ է մտնում միայն ընտանիքում բռնություն գործադրած անձին դրա մասին իրագրելու պահից՝ պատճենը անձին ստորագրությամբ՝ առձեռն հանձնելու, պաշտոնական էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով ուղարկելու կամ հեռախոսակապով բովանդակությունը պարզաբանելու միջոցով: Լավագույն փորձը ցույց է տալիս, որ ձգձգումներից խուսափելու և տուժողի անվտանգությունը ապահովելու համար, կասկածյալին անհրաժեշտ է ոստիկանության բաժանմունք կանչել, եթե նա ներկա չի եղել բռնության վայրում կամ հրաժարվել է ստորագրել անհետաձգելի միջամտության որոշումը:

Ոստիկանությունը պատասխանատու է իրավախախտի կողմից անհետաձգելի միջամտության որոշման կատարման նկատմամբ վերահսկողության համար:

Ձերբակալությունը

Լուրջ բռնության դեպքում բռնություն գործադրած անձը տեղում կարող է ձերբակալվել:

Պաշտպանական որոշումը

Թեև պաշտպանական որոշման նախաձեռնողը տուժողը կամ տուժողների աջակցության կենտրոնն է, սակայն ոստիկանությունը վերահսկում է իրավախախտի նկատմամբ կայացված պաշտպանական որոշման կիրառումը:

Պաշտպանական որոշում ընդունելու համար անհետաձգելի միջամտության որոշման ամկայությունը պարտադիր չէ: Սակայն, եթե տուժողին սպառնացող վտանգի ռիսկի մակարդակը բարձր է, մինչև պաշտպանական որոշում կայացնելը հնարավոր է որոշում կայացնել անհետաձգելի միջամտության մասին: Դա կնվազեցնի ռիսկերը: Կարևոր է, որպեսզի պաշտպանական որոշումը կայացվի հնարավորինս սեղմ ժամետում, ցանկալի է՝ 24 ժամվա ընթացքում: **Պաշտպանական որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները, որոնք նման են անհետաձգելի միջամտության որոշման դեպքում կիրառվող սահմանափակումներին:**

1. հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայրից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը: Այս սահմանափակման ժամկետը սահմանելիս դատարանը հաշվի է առնում ընտանիքում բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ գտնվող անձանց ապաստարան տեղափոխելու հնարավորությունը և նպատակահարմարությունը, ընտանիքում բռնություն գործադրած անձի համար բնակության այլ վայրերի մատչելիությունը:
2. արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր:
3. արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կառաջացնի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի առումով: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը:
4. մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը բռնություն գործադրած անձի տիրապետման տակ եղած զենքն ի պահ հանձնել ոստիկանություն³⁵:
5. ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել՝ ընտանիքում բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անչափահաս կամ չափահաս անաշխատունակ երեխաների, ինչպես նաև իրենց համատեղ խնամքի տակ գտնվող անձանց խնամքի ծախսերը: Դատարանը կարող է ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել հոգալու ընտանիքում բռնության ենթարկվածի այլ անհրաժեշտ ծախսերը, որոնք ծագել են գործադրված բռնության պատճառով (ինչպիսիք են գույքային վնասը կամ ֆիզիկական վնասվածքները):
6. անհրաժեշտության դեպքում արգելել երեխաների հետ տեսակցությունները:
7. արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց հետ:
8. ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա դնել պարտականություն անցնելու վերականգնողական ծրագիր³⁶:

Ի տարբերություն անհետաձգելի միջամտության որոշման, պաշտպանական որոշումը կայացվում է մինչև 6 ամիս ժամկետով և երկարաձգման անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ այն կարող է 2 անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով:

Այդ ժամանակահատվածում կարևոր է տուժողին տրամադրել ապաստարանների կամ այն ՅԿ-ների թեժ գծերի հեռախոսահամարները, որոնք նրան կարող են հետագա խորհրդատվություն տրամադրել և անվտանգության պլան առաջարկել, ինչպես նաև պաշտպանական որոշում ստանալու համար ներկայացնել նրա շահերը դատարանում: Երբ ոստիկանությունը ժամանում է միջադեպի վայր, տուժողին պետք է նաև տրամադրել սոցիալական ծառայությունների և կանանց աջակցման կենտրոնների կոնտակտային տվյալները, որտեղ նա կարող է ստանալ լրացուցիչ օգնություն:

35 Միջազգային լավագույն փորձի համաձայն, ընտանեկան բռնություն կատարելուց հետո անձը գրկվում է զենք ունենալու իրավունքից: Պաշտպանական որոշման գործողության ժամկետը սպառվելուց հետո իրավախախտին զենք վերադարձնելը կարող է չափազանց վտանգավոր լինել և խորհուրդ է տրվում, որ Հայաստանում պրակտիկան արագորեն արտացոլի այդ իրողությունը:

36 Այս ձեռնարկը գրելու պահին Հայաստանում վերականգնողական ծրագրեր չկային և օրենքի այս պահանջը արդյունավետ կերպով կատարելու համար դրանք պետք է ներդրվեն:

Վերահսկողությունը

Ոստիկանությունը պատասխանատու է անհետաձգելի միջամտության որոշման և պաշտպանական որոշման իրականացման նկատմամբ վերահսկողության համար: ԶԶ քրեական օրենսգրքի համաձայն, անհետաձգելի միջամտության որոշման և պաշտպանական որոշման պահանջների խախտումը պատժվում է.

- ▶ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով,
- ▶ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով
- ▶ ազատազրկմամբ՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով³⁷:

Հաշվառման ձևաթուղթը լրացնելը

Յուրաքանչյուր անգամ, երբ ոստիկանը ժամանում է միջադեպի վայր ընտանեկան բռնության ենթադրյալ գործը քննելու համար, նա պարտավոր է լրացնել հաշվառման ձևաթուղթը՝ անկախ պաշտպանական միջոցի (նախազգուշացման, անհետաձգելի միջամտության որոշման կամ պաշտպանական որոշման) կիրառումից: Դեպքի արձանագրումը ցանկալի է կատարել ոստիկանության կանչի նույն օրը: Կանխարգելիչ հաշվառման քարտը անհապաղ դուրս է գրվում ստորև նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1. Ոստիկանության կողմից իրավախախտի նկատմամբ նախազգուշացում կիրառելը:
2. Ոստիկանության կողմից անհետաձգելի միջամտության որոշում կայացնելը:
3. Ընդհանուր իրավասության դատարանի կողմից պաշտպանական որոշում կայացնելը:
4. Իրավախախտի կողմից ընտանեկան բռնության համար նախկինում դատվածություն ունենալը:

Մինչ բռնություն գործադրած անձի կանխարգելիչ հաշվառումը նրան պետք է կանչել ոստիկանության տարածքային բաժանմունք կամ հեռախոսային կապի, պաշտոնական էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով ծանուցել նրան կանխարգելիչ հաշվառման վերցնելու և դրա հիմքերի մասին, պետք է կազմվի և հաշվառման վերցված անձի կողմից ստորագրվի ծանուցված լինելու փաստը հաստատող տեղեկանք, իսկ վերջինիս կողմից այն ստորագրելուց հրաժարվելու դեպքում, համապատասխան նշում կատարվի հրաժարվելու պատճառների մասին և ծանուցման մասին տեղեկանքը կցվի կանխարգելիչ հաշվառման քարտին:

Ընտանեկան բռնության միջադեպի արձանագրումը պետք է դիտարկել որպես ավտոմատ գործընթաց և վերը նկարագրված անվտանգության նկատառումներից ելնելով այն պետք է կատարել անմիջապես:

³⁷ ԶԶ քրեական օրենսգրքի, հոդված 353.1

Հաշվառման վերցնելու հետագա քայլերը.

- **ՔԱՅԼ 1.** Բռնության փաստն արձանագրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հարցում է կատարվում ընտանեկան բռնության դեպքերով զբաղվող ոստիկանության բաժանմունք՝ 1) բռնություն գործադրած անձի մոտ նախկինում դատվածությունների առկայությունը պարզելու և 2) բռնություն գործադրած անձին հաշվառման վերցնելու փաստը ստուգելու համար:
- **ՔԱՅԼ 2.** Եթե պարզվի, որ բռնություն գործադրած անձը հաշվառման չի վերցված, ապա կանխարգելիչ հաշվառման քարտի բացման մասին զեկուցագիրը կանխարգելիչ հաշվառման հիմք հանդիսացող փաստաթղթերի հետ միասին ներկայացվում է ոստիկանության բաժնի ղեկավարին:
- **ՔԱՅԼ 3.** Բաժնի պետի կարգադրությամբ ոստիկանության աշխատակիցը գրանցում է իրավախախտի կանխարգելիչ հաշվառման քարտը բռնություն գործադրած անձանց գրանցամատյանում:
- **ՔԱՅԼ 4.** Գրանցվելուց հետո 3 օրվա ընթացքում այդ հարցով զբաղվող ոստիկանության ծառայողը ծանուցում է ոստիկանական տեղամասի պետին և հանցագործի բնակության վայրի համայնքի սոցիալական աշխատողին: Տեղեկությունը ստանալուց հետո ոստիկանական տեղամասի պետը պետք է հսկողության տակ վերցնի բռնության ենթարկված անձի բնակարանը:
- **ՔԱՅԼ 5.** Ոստիկանության բաժինը (կենտրոնական վարչությունը), որտեղ կանխարգելիչ հաշվառման քարտի հիման վրա իրականացվում է կանխարգելիչ հաշվառումը, երեք օրվա ընթացքում տեղյակ է պահվում բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելու (1 տարվա ժամկետով) և/կամ կանխարգելիչ հաշվառումից հանելու մասին³⁸:
- **ՔԱՅԼ 6.** Հաշվառման վերցված անձի վերաբերյալ կազմվում է տեղեկանք, որը պահվում է ոստիկանության բաժնի արձանագրային քարտադարանում:
- **ՔԱՅԼ 7.** Հաշվառման վերցված անձի փաստացի բնակության վայրը փոխելու դեպքում մասնագիտացված ստորաբաժանման ոստիկանության ծառայողը անմիջապես տեղեկացնում է այդ մասին համապատասխան տարածքի ոստիկանության բաժին: Անձի նոր բնակության վայրը չհայտնաբերելու դեպքում իրավասու ոստիկանության ծառայողը կանխարգելիչ հաշվառման քարտում այդ մասին նշում է կատարում և 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում այդ մասին ոստիկանության բաժնին, ընդ որում կանխարգելիչ հաշվառման գրանցումը կասեցվում է:
- **ՔԱՅԼ 8.** Անձը հանվում է կանխարգելիչ հաշվառումից ոստիկանության աշխատակցի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա բաժնի պետի կողմից տրված կարգադրությամբ, որի մասին գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում և 3 օրվա ընթացքում այդ մասին տեղեկացվում է իրավախախտի բնակության վայրի ոստիկանական տեղամասի պետը և սոցիալական աշխատողը:

38 Ցանկալի է, որ բռնություն գործադրած անձին հաշվառման վերցնելուց հետո նրա հաշվառումը շարունակվի ոստիկանության կողմից, քանի որ անձը հետագայում կարող է կրկին ամուսնանալ, հետագայում ընտանեկան բռնություն գործադրել և այլն: Ընտանեկան բռնություն գործադրած անձանց մասին տեղեկատվությունը պետք է էլեկտրոնային եղանակով պահվի կենտրոնացված համազգային տվյալների բազայում՝ ապագա տեղեկանքների համար, ինչպես որ դա կատարվում է այլ երկրներում:

Անձին կանխարգելիչ հաշվառումից հանելու համար օրենքով նախատեսված հիմքերը

- ▶ Կանխարգելիչ հաշվառման մեջ գտնվող անձի մոտ ախտորոշվել է մտավոր հիվանդություն և նա հաշվառման է առնվել համապատասխան բժշկական հաստատությունում.
- ▶ Անձը մեկ տարուց ավել գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս.
- ▶ Կանխարգելիչ հաշվառման քարտի ժամկետը լրացել է.
- ▶ Պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու դեպքում.
- ▶ Մահվան դեպքում.
- ▶ Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Օրենքի այս դրույթը բավարար կերպով չի կառավարում բռնության ենթարկված անձի, նրա երեխաների կամ այլ տուժողների (սոր և նախկին) համար իրավախախտից բխող հնարավոր վտանգը: Բռնություն գործադրած անձը դժվարությամբ է փոխում իր վարքագիծը և հնարավոր է, որ կրկին բռնություն կգործադրի: Ընտանեկան բռնություն գործադրած անձին հաշվառումից հանելու հիմքերը, ըստ էության, պայմանավորված չեն վարքագծի որևէ փոփոխությամբ: Հաշվառումից հանելու համար լուրջ հիմքերի բացակայության պարագայում անձին հաշվառումից հանել խորհուրդ չի տրվում (բացառությամբ անձի մահվան դեպքի):

ԲԱԺԻՆ III

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Այս բաժինն անդրադառնում է նախորդ բաժիններում չդիտարկված հարցերին, որոնք միջազգային չափանիշների և լավագույն փորձի համաձայն կնպաստեն ընտանեկան բռնության դեմ պայքարին:

Քրեական դատավարության գործընթացի անխոչընդոտ իրականացումը և ընտանեկան բռնության սկստմամբ ավելի լայն արձագանքը

Ընտանեկան բռնություն գործադրած անձանց պատասխանատվության ենթարկելու համար քրեական արդարադատության համակարգում պետք է ձևավորել առանց խոչընդոտների և համակարգված արձագանք: Համապատասխան գործողություններ նախատեսող իրավակարգավորումների և սահմանազատումներին զուգահեռ գործընթացի յուրաքանչյուր փուլում մեղադրված դեռակատարների հետ հանդիպումները կարող են չափազանց օգտակար լինել: Մասնավորապես, քրեական հետապնդման ձախողված դեպքերի ուսումնասիրությունը կարող է ի հայտ բերել գործընթացում առկա բացթողումները, որոնց մասին իրազեկումը շահագրգիռ կողմերին թույլ կտա հետագայում խուսափել նման սխալներից: Իրավախախտների նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման դեպքերի աճի և դրանց արդյունավետության բարձրացման համար կարևոր է, որ քրեական արդարադատության համակարգի գործակալությունները համագործակցեն՝ այդ նպատակներին հասնելու համար նախատեսված կարգավորումները և համակարգերը համաձայնեցնելու համար: Ոստիկանության կողմից իրավախախտներին պատասխանատվության ենթարկելն ապահովող քաղաքականության իրականացման համար ոստիկանությունը, հետաքննող ստորաբաժանումները (նախաքննություն և քննչական կոմիտեն), դատախազները և դատական համակարգը պետք է համաձայնեցնեն ինչպես իրականացվելիք քաղաքականության սկզբունքները, այնպես էլ գործնական մոտեցումները:

Ընտանեկան բռնության դեմ պայքարի կատարելագործման և առաջացող խնդիրների լուծման համար հիմնական գործակալությունների միջև անհրաժեշտ կլինի անցկացնել պարբերական հանդիպումներ: Գործակալությունների միջև խնդիրների բաց քննարկումը և ընտանեկան բռնությանն արձագանքող ոստիկանությանը քննարկումների արդյունքների մասին իրազեկելը թույլ կտա արագորեն բարելավել արդյունքները: Հայաստանում ներկայումս քրեական արդարադատության համակարգի տարբեր օղակների միջև նման հանդիպումներ տեղի չեն ունենում: Ցանկացած նման միջգերատեսչական գործընթաց նաև պահանջում է տվյալների ավելի արդյունավետ հավաքագրում և վերլուծություն՝ ինչպես յուրաքանչյուր կողմից առանձին, այնպես էլ համատեղ: Հավաքված տվյալների վերլուծությունը կնպաստի ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարին (տե՛ս ստորև բերված տվյալները):

Արդարադատության համակարգից բացի, ընտանեկան բռնության սկստմամբ անհրաժեշտ է ապահովել ավելի լայն արձագանք: “Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին” նոր օրենքը սահմանում է, որ մինչև 2019 թ. պետական և հասարակական կազմակերպությունները ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար պետք է ստեղծեն ապաստարաններ և ճգնաժամային կենտրոններ³⁹: Մասնագիտական աջակցությունը մեծապես կօգնի ընտանեկան բռնության ենթարկված կանանց: Բռնության զոհերին անհրաժեշտ է ոչ միայն ապահով կացարան, այլև խորհրդատվություն, որը նրանց կօգնի հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել իրենց հետ, բացահայտել ոտնձգության ամբողջական պատկերը և հասկանալ բռնության համար պատասխանատվության բովանդակությունը: Իրավական գործընթացների, բնակարանային և ֆինանսական հարցերի հետ կապված աջակցությունը թույլ կտա նրանց կայացնել պատճառաբանված որոշումներ, որոնք առավելագույնս կնպաստեն նրանց և նրանց երեխաների բարեկեցությանը: Այդ ողջ գործընթացում ՀԿ-ները և ապագա պետական ճգնաժամային կենտրոնները կենսական դեր են կատարում: Ընտանեկան բռնության ենթարկված կանայք հաճախ

39 2018 թ-ի հոկտեմբերի դրությամբ Հայաստանում գործում է միայն մեկ ապաստարան՝ 8 մահճակալով:

ստիպված են այցելել ընտանեկան բժշկի, հայտնվել շտապ օգնության կետերում կամ դառնում են անօթևան: Ընտանեկան բռնության ենթարկված կանայք, հատկապես նրանք, ովքեր երեխաների հետ են, բախվում են բազմաթիվ խնդիրների, որոնց լուծման համար անհրաժեշտ է համակարգված բազմակողմանի արձագանք: Տուժողներից շատերը վատառողջ են, նրանց մոտ առկա են մարմնական վնասվածքներ, նրանք ունեն երեխաների դպրոց գնալու, բնակարանի, զբաղվածության, անվտանգության, ինչպես նաև իրավական և վարչական համակարգերի հետ կապված խնդիրներ: Դեռևս բար, տարբեր նախարարություններ և գործակալություններ պետք է մշակեն համակարգված արձագանք՝ բռնության ենթարկված անձանց հասարակությանը վերախնտեգրելու և ոտնձգությունից ազատ ապրելու հնարավորություն տալու համար:

Լավ համակարգված արձագանքի օրինակ է Ռիսկերի գնահատման միջգերատեսչական համագումարը (անգլերեն հապավումը՝ MARAC): Սա տուժողի և երեխաների անվտանգության հարցում լուրջ դերակատարում ունեցող պաշտոնյաների (ոստիկանության, սոցիալական ապահովության ծառայություն, մանկական սոցիալական խնամքի աշխատակիցների, ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների մասնագետի և այլն) հանդիպումների հարթակ է, որտեղ քննարկվում են վերջին ժամանակահատվածում գործակալություններից որևէ մեկի ուշադրության կենտրոնում հայտնված բարձր ռիսկային դեպքերը: Բարձր ռիսկային են այն դեպքերը, որոնց պարագայում ռիսկի գնահատման ձևաթղթում առկա են որոշակի թվով «այո» պատասխաններ, Մեծ Բրիտանիայի դեպքում դա 26 հարցերից 13-14-ին տրված «այո» պատասխանն է (Հայաստանի համար այդ թիվը կարող է կազմել 10): Հանդիպման նպատակն է՝ կառավարել և/կամ նվազեցնել տուժողի առջև ծառայած ռիսկը՝ օգտագործելով այն գործակալությունների ռեսուրսները և փորձը, որոնք կարող են դերակատարում ունենալ այդ հարցում:

Թեև Ռիսկերի գնահատման միջգերատեսչական համագումարը շատ լավ լուծում է հանդիսանում ընտանեկան բռնության բարձր ռիսկի դեպքերի համար, այն զգալի միջոցներ և արձագանքի գծով լայն համագործակցություն է պահանջում, որը դեռևս պետք է ձևավորվի Հայաստանում:

Երեխաների պաշտպանության գործակալության ստեղծման կարիքը

Ներկայումս Հայաստանում գոյություն չունի վտանգավոր կամ ծայրահեղ վնասակար միջավայրում հայտնված երեխաներին հուսալի պաշտպանություն առաջարկող գործակալություն: Գործնականում երեխաներին վտանգավոր ընտանեկան իրավիճակից մեկուսացնելը շատ դժվար է: Նույնիսկ համապատասխան դատական որոշումների առկայության դեպքում երեխաները չեն վերադարձվում իրենց մայրերին, և հաճախ բռնություն գործադրած անձինք պահպանում են երեխաների նկատմամբ հսկողությունը և թույլ չեն տալիս նրանց կապ հաստատել իրենց մոր հետ: Հաշվի առնելով ընտանեկան բռնության պայմաններում գտնվող երեխաներին հասցվող վնասը՝ անհրաժեշտ է ստեղծել լայն լիազորություններով օժտված և հմուտ մասնագետների ղեկավարությամբ գործող երեխաների պաշտպանության գործակալություն:

Դատաբժշկական փորձաքննությունը և կուսության ստուգման արգելքը

Հայաստանում սեռական բռնության դեպքերի մասին հաղորդումները և այդ դեպքերի քննությունը խնդրահարույց է և հաճախ չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Դրա հստակ վկայությունն է այն փաստը, որ բոլոր դատաբժշկական փորձագետները տղամարդիկ են, ընդ որում՝ կուսության ստուգումը և չարաշահումները լայն տարածում են գտել: Սեռական բռնության ենթարկված կնոջ համար առնվազն պետք է հնարավորություն ստեղծել զննության ենթարկվելու որակավորված կին մասնագետի կողմից:

Ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով հաշտեցումն ու հաշտարարությունը

Ոստիկանությունն ահազանգ է ներկայացվում միայն այն դեպքում, երբ տուժողի համար բոլոր միջոցները սպառվել են, և նա վախենում է իր և իր երեխաների անվտանգության համար: Նման դեպքերում հաճախ բռնությունն արդեն իսկ արմատավորված է լինում հարաբերություններում և այն վերացնելն

ավելի դժվար է կամ հարաբերությունների վատթարացումը այնքան մեծ է, որ ընտանեկան միավորը պարզապես չի կարող գոյատևել:

Հայաստանի օրենսդրությունը և հասարակությունը շեշտում են ընտանեկան բռնության դեպքերում ընտանիքի հաշտեցման կարևորությունը և եթե կինն ամուսնուն վերադարձնում է ընտանիք, ապա դա դիտվում է որպես հաշտեցման գործընթացի դրական արդյունք: Սովորաբար, դա տեղի է ունենում «կրքերի հանդարտեցման» շրջանից հետո, որին կարող են նպաստել նոր օրենքով նախատեսված պաշտպանական միջոցները: Ոչ բոլոր կանայք կցանկանան հեռանալ իրենց ամուսիններից, սակայն բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաների անվտանգությունն ու պաշտպանվածությունը և բարեկեցությունը առաջնային են, և դա կարող է լինել բռնությանը վերջ դնելու միակ միջոցը: Կարող են նաև լինել այնպիսիք, ովքեր ցանկանում են առանձնանալ, սակայն ֆինանսական, ընտանեկան կամ սոցիալական ճնշումների պատճառով չեն կարող դա անել: Հետևաբար, «հաշտեցում» հասկացությունը պետք է վերանայվի:

Ստամբուլի կոնվենցիան, որը Հայաստանը մտադիր է վավերացնել, հստակորեն մերժում է պարտադիր հաշտեցման հայեցակարգը, քանի որ դա գործընթաց է, որը նպաստում է իրավախախտի կողմից իշխանության և հսկողության դրսևորման դինամիկային: Հաշտարարությունը ենթադրում է, որ երկու կողմերն էլ գործընթացին մոտենան հավասար հիմունքներով և իրավասություններով: Սակայն, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեպքերում, տուժողի նկատմամբ գործադրված բռնության, հսկողության և/կամ նվաստացման պատճառով իշխանության հավասարակշռությունը խախտված է հոգուտ բռնարարի⁴⁰: Հաշտեցումը, եթե այն անցանկալի է կամ կողմերը անհավասար կարգավիճակում են, ինչն առկա է ընտանեկան բռնության դեպքերում, կարող է սաստկացնել բռնությունը և ավելի շատ վնաս հասցնել տուժողին: Ոստիկանության կամ այլ շահագրգիռ կողմերի խնդիրն է ոչ թե հաշտեցումը, այլ տուժողներին պաշտպանելը և նրանց անվտանգությունն ապահովելը:

Իրավախախտների նկատմամբ վերաբերմունքը

Շատ հաճախ տուժողները չեն ցանկանում, որ իրավախախտը դատապարտվի կամ կալանավորվի, այլ պարզապես ցանկանում են, որ բռնությունը դադարեցվի: Չնայած իրավախախտի վերականգնումը հետագա բռնության կանխարգելման կարևոր գործոն է, սակայն դատարանը չպետք է որպես քրեաիրավական պատժամիջոցների այլընտրանք իրավախախտին կարգադրի մասնակցել վերականգնողական ծրագրերին: Որևէ ծրագրին մասնակցելը պետք է կազմի դատավճռի կամ պաշտպանական որոշման մաս, այլ ոչ թե հանդիսանա իրավական պատժամիջոցների այլընտրանքը:

Բարկության վերահսկման ծրագրերը, հարաբերությունների խորհրդատվության կամ զույգերի թերապիայի ծառայությունները ընտանեկան բռնության դեպքերում արդյունավետ չեն: Դրանց միջոցով հնարավոր չէ վերացնել ընտանեկան բռնության խորը արմատները կամ դրան նպաստող իշխանության և հսկողության դինամիկան: Բռնության ենթարկված անձինք չպետք է կրեն բռնարարի վարքի բարելավման համար պատասխանատվության բեռը: Նրանք չպետք է ենթարկվեն նաև որևէ հետագա ռիսկի:

Օրինակ, առանձին դեպքերում ակոհուլի կամ թմրանյութերի չարաշահման դեմ պայքարի, ծնողական հմտությունների բարելավման, բարկության վերահսկման կամ խաղամոլությունից կախվածության դեմ պայքարի ծրագրեր ուղղորդումը կարող է տեղին լինել, սակայն դրանք պետք է դիտվեն որպես ընտանեկան բռնություն գործադրած անձանց հատուկ ուղղված լրացուցիչ ծրագրեր, այլ ոչ թե որպես վերականգնման/թերապիայի մոդելի հիմնական բաղադրիչը: Փաստն այն է, որ որևէ ծրագիր չի կարող երաշխավորել տուժողի ապագա անվտանգությունը և նման ծրագրերը կարող են ընդամենը ընդհանուր արձագանքի մասը կազմել⁴¹:

Ընտանեկան բռնության գործերում անձամբ ներգրավված ոստիկանության աշխատակիցների

40 Եվրոպայի խորհուրդ, Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար. ուսումնական ռեսուրս իրավապահ մարմինների և արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման համար, 2016 թվական, էջ 63:

41 Եվրոպայի խորհուրդ. «Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեպքերին առնչվելիս Բուլղարիայի ոստիկանության մասնագիտական կարողությունների զարգացումը», Անևա Կոնստանցա Բալդրի, 2016թ., էջ 66:

հետ վարվելու համապատասխան քաղաքականությունը

Ոստիկանության նկատմամբ հավատն ու վստահությունը կարող է ամրապնդվել, եթե վերջինս արձագանքի այն դեպքերին, երբ ոստիկանության աշխատակիցն ինքն է ենթարկվել ընտանեկան բռնության կամ բռնություն գործադրած անձը ոստիկանության աշխատակից է: Այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ սա այն հարթությունն է, որտեղ ոստիկանության աշխատակիցներին չվերաբերող դեպքերի համեմատ զարգացումն ավելի դանդաղ է ընթանում: Լավագույն փորձը ցույց է տալիս, որ այս հարցում էական են հետևյալ երկու մոտեցումները.

- ▶ Ելնելով այն հանգամանքից, որ տղամարդկանց կողմից ընտանեկան բռնությունը կարող է գործադրվել ցանկացած կազմակերպությունում աշխատող անձի ընտանիքում, ոստիկանությունը, ի վիճակի լինելով որոշելու դրա հետ կապված արձագանքը, հայտնվում է յուրահատուկ վիճակում: Շատ կարևոր է, որ ընտանեկան բռնության արձագանքի վերաբերյալ բարելավված գործելակերպը հավասարապես կիրառվի նաև ոստիկանության աշխատակիցների պարագայում:
- ▶ Ընտանեկան բռնություն գործադրած ոստիկանության աշխատակիցների գործերի անկախ քննությունը կապահովի այն ընկալումը, որ արձագանքը ճիշտ է: Դա նաև վստահություն կներշնչի իրենց գործի նկատմամբ մոտեցման վերաբերյալ մտահոգված տուժողներին, ինչպես նաև այն անձանց, ովքեր սատարում են տուժողներին՝ բողոք ներկայացնելը, որպես ողջամիտ և անվտանգ տարբերակ դիտարկելու միջոցով:

Տվյալներ և վերլուծություն

Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության առնչությամբ առկա վիճակագրության պակասը բարդացնում է կատարված աշխատանքի արդյունավետության գնահատումը: Դա տարածված երևույթ է, ընդ որում՝ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության տարբեր սահմանումների և տվյալների տարբեր համակարգերի պատճառով ինդիքն ավելի է խորանում: Աշխատանքի արդյունավետության գնահատման հուսալի համակարգ ունենալու համար կարելի է ստեղծել տվյալների չափման հստակեցված և պարզ համակարգ: Ստորև ներկայացված աղյուսակը նկարագրում է, թե ինչը կարող է չափվել և ներկայացնում է արդյունքները (զուտ թվային արտահայտությամբ):

| ՉԱՓԱՆԻՇ | ԱՐԴՅՈՒՆՔ |
|---|---|
| Ընտանեկան բռնության մասին ստացված հեռախոսազանգերի քանակը | Սահմանել սանդղակ և ժամանակի ընթացքում ձգտել բարելավել այն |
| Նախագրուշացումների, անհետաձգելի միջամտության որոշումների և պաշտպանական որոշումների թիվը | Ապահովել պաշտպանական միջոցների կիրառումը և հաշվարկել ստացված հեռախոսազանգերի համեմատությամբ դրանց տոկոսը |
| Գրանցված դեպքերի թիվը | Ապահովել, որ գործերի հաշվառումը համապատասխանի Քննչական կոմիտեի պահանջներին |
| Քննչական կոմիտեի կողմից քննված գործերի թիվը | Համեմատել 1-ին և 4-րդ կետերը, ստուգելու համար, որ մինչ հետաքննություն սկսելը գործերին հետևում է հետաքննությունը |
| Քրեական հետապնդման դեպքերի թիվը | Հաշվարկել դեպքերի տոկոսը, որոնցով իրականացվել է քրեական հետապնդում և ձգտել ավելացնել այն |
| Իրավախախտին քրեական մեղադրանք առաջադրելու դեպքերի թիվը | Քրեական հետապնդման արդյունավետությունը ցուցադրելու համար |
| Քննված գործերի արդյունքը (տուգանք, ազատազրկում, գործի կասեցում և այլն) | Գնահատել կիրառված պատասխանատվության միջոցի պատշաճությունը (ոչ թե առանձին գործերի առումով, այլ ընդհանուր միտումները) |
| Ընտանեկան բռնության հետևանքով մահացածների թիվը | Գնահատել ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը |

Մահվան ելքով ընտանեկան դեպքերի գնումը

Ընդհանուր պրակտիկան, հատկապես Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում, ընտանեկան բռնության հետևանքով յուրաքանչյուր մահվան ելքով դեպքի ուսումնասիրությունն է (դա նաև հիմնված է այն ենթադրության վրա, որ մահվան պատճառը պարզելու և ընտանեկան բռնության առկայությունը ստուգելու համար բոլոր մահացության դեպքերը ենթակա են աուտոպսիայի)⁴²: Որոշ դեպքերում դիտարկվում են նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց ինքնասպանությունները և մահափորձերի դեպքերը: Նման դիտարկումների նպատակը գործի որևէ փուլում ներգրավված փորձագետներին մեղադրանք ներկայացնելը չէ:

Նրանք ուղղակի պետք է որոշեն.

1. Որն է եղել կամ ինչպիսին պետք է լիներ նրանց արձագանքը
2. Որ գործակալություններն են կապ հաստատել տուժողի, իրավախախտի կամ երեխաների հետ
3. Որ գործակալությունները պետք է կապ հաստատեին նրանց հետ
4. Ինչ դասեր կարելի է քաղել ապագայի համար

Նման դիտարկումները կարող են չափազանց արդյունավետ լինել և մատնանշել քաղաքականության և պրակտիկայի ապագա ուղղությունները: Այն երկրներում, որտեղ նման դիտարկումներ իրականացվում են, դրանք նաև վկայում են շահագրգիռ մարմինների միջև համագործակցության, մասնագիտական ծառայությունների ստեղծման և առողջապահության ոլորտի ներգրավվածության անհրաժեշտության մասին⁴³: Հայաստանում թերևս նպատակահարմար կարող է լինել սկզբնական շրջանում դիտարկել փոքր թվով նման գործեր, հաշվի առնելով այն, որ այդ գործընթացը կարող է չափազանց ծախսատար լինել: Ակնկալվում է, որ նման դիտարկումների արդյունքները հետագա վերլուծությունների և դասեր քաղելու համար լավ հնարավորություններ կստեղծեն:

42 Մեծ Բրիտանիայի կառավարությունը նման դիտարկումներն իրականացնելու համար կազմել է օգտակար ուղեցույցներ. <https://www.gov.uk/government/publications/revised-statutory-guidance-for-the-conduct-of-domestic-homicide-reviews>

43 Նման դիտարկումների վերլուծության օրինակ է. http://www.standingtogether.org.uk/sites/default/files/docs/STADV_DHR_Report_Final.pdf

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Խոցելի, մարգինալացված կամ փոքրամասնությունների խմբերի օրինակներ

Հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցներ

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ավելի մեծ է հավանականությունը, որ հաշմանդամություն ունեցող կանայք իրենց կյանքի ընթացքում կենթարկվեն ընտանեկան եւ սեռական բռնության՝ ի տարբերություն հաշմանդամություն չունեցող կանանց: Հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՌԲ)՝ ուսնձգությունների ենթարկվելու հավանականության պատճառների վերաբերյալ հետազոտությունը ցույց է տալիս, որ սա մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք առավել հաճախ գտնվում են այնպիսի հաստատություններում, որտեղ մարդիկ վերահսկում են նրանց: Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձինք առօրյա կյանքի որոշակի պահերին կարող են ունենալ օգնության կարիք, որի հետեւանքով խնամողները հայտնվում են այնպիսի իրավիճակում, որ նրանք իշխանություն ունեն այդ անձանց նկատմամբ: Ուսնձգության մեկ օրինակ կյանքի համար կարելու առարկաները տեղաշարժելն է, որպեսզի կույր անձը չկարողանա գտնել դրանք, կամ ուսնձգություն կատարողը կարող է տեղեկությունը դիտավորությամբ թաքցնել խուլ անձից, որպեսզի նա չկարողանա օգնություն ստանալ: Քանի որ ուսնձգության այս տեսակների դեպքում օգտվում են հաշմանդամության որոշակի տեսակներ ունեցող անձանց վիճակից, դրանք հատուկ են ուսնձգություն վերապրած՝ հաշմանդամություն ունեցող անձանց: Վերոնշյալը գործում է նաեւ տարեց անձանց/ ընտանիքի թույլ անդամների նկատմամբ կատարված ուսնձգության դեպքում:

Ավելին, կարծրատիպերը հաճախ կարող են ազդել այն հանգամանքի վրա, թե ինչպես է կատարվում ուսնձգությունը, եւ արդյոք անձը կարող է օգնություն խնդրել կամ լսելի լինել, թե՛ ոչ: Օրինակ, գոյություն ունի արմատավորված կարծրատիպ այն մասին, որ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց չպետք է հավատալ: Նրանք իրենց պնդումներում չեն կարող լինել հետեւողական կամ ճշգրիտ: Ուսնձգություն կատարողները սա ընկալում են այնպես, որ նրանք էլ ավելի զորեղ են ավելի շատ ուսնձգություն կատարելու համար պատժից խուսափելու համար՝ արատավոր եւ բռնի շրջափուլ: Սա նաեւ նշանակում է, որ եթե մտավոր հաշմանդամություն ունեցող անձը փորձում է դիմել օգնության համար, քիչ է հավանականությունը, որ նրանց կհավատան:

ՀՌԲ-ի եւ տարեց անձանց կողմից ուսնձգության մասին հաղորդելու խոչընդոտները

- ▶ Հիսոսակցական խանգարումներ ունեցող անձինք չեն կարող բռնության մասին հաղորդել ընտանիքի կամ ծառայություն մատուցողների համար հասկանալի ձեւով:
- ▶ Որոշ ընտանիքներ ամաչում են հաշմանդամություն ունեցող երեխայից կամ ընտանիքի անդամից, իսկ բռնության մասին պատմելը նշանակում է բացահայտել իրենց համար ամոթալի այդ հանգամանքը:
- ▶ Հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցները վախենում են, որ իրենց չեն հավատա:
- ▶ Բռնարարը կարող է սպառնալ հաշմանդամություն ունեցող կամ տարեց անձին, որ բռնության մասին պատմելու դեպքում կվնասի նրան:
- ▶ Հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցները վախենում են զրկվել իրենց մասին հոգ տանող խնամակալից և հավատացած են, որ ստիպված են որոշակի բռնություն հանդուրժել:
- ▶ Հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցները վախենում են հեռացվել իրենց տնից և զրկվել իրենց ապրելու վայրն ընտրելու հնարավորությունից:
- ▶ Հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցները վախենում են, որ նրանց կտեղափոխեն

հատուկ հաստատություններ, եթե բացահայտվի, որ տանը նրանց նկատմամբ բռնություն է գործադրվում:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի շրջանում ծառայությունների մատուցման խոչընդոտները

- ▶ Սահմանափակ ռեսուրսների եւ աշխատակիցների վերապատրաստման դասընթացների բացակայության հետեւանքով գոյություն չունեն հասանելի ծառայություններ:
- ▶ Տեղեկատվությունը/կրթությունը հասանելի չէ ՅՈՒՆԻՍԵՖ-ներին, քանի որ ռեսուրսները չեն տրամադրվում Բրեյլի գրերի կամ ձայնագրությունների միջոցով, եւ դրանցում ընտանեկան բռնության դեպքերը չեն սահմանվում այնպես, որոնք կարող են վերագրելի լինել հաշմանդամություն ունեցող անձանց վիճակի չարաշահման դեպքերին:
- ▶ Որոշ զոհեր կարող են չունենալ ինքնուրույն օգնություն խնդրելու հմտություններ/կարողություններ:
- ▶ Առավել մեծ է այն վտանգը, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են զրկվել երեխայի խնամակալության իրավունքից, եթե համարվում է, որ նրանք չեն կարող հոգ տանել իրենց իսկ երեխաների մասին:

Բազմակի խտրականություն

Հաշմանդամություն ունեցող կանանցից եւ տարեց կանանցից բացի՝ գոյություն ունեն կանանց այլ խմբեր, որոնք կարող են ենթարկվել խտրականության՝ բազմաթիվ հիմքերով, ինչը հանգեցնում է արդարադատության, ծառայությունների եւ պաշտպանության մատչելիության սահմանափակման: Գոյություն ունեն տարբերություններ ոչ միայն այն հանգամանքում, թե ինչպես են կանայք եւ տղամարդիկ ենթարկվում բռնության, եւ ինչպիսի ազդեցություն է բռնությունն ունենում նրանց վրա, տարբերություններ առկա են նաեւ կանանց խմբերում: Որոշակի էթնիկ կամ կրոնական ինքնություն, սեռական կողմնորոշում կամ միգրանտի կարգավիճակ ունեցող կանայք կարող են չցանկանալ բռնության մասին հաղորդել եւ կարծրատիպերի կամ հաղորդման անցանկալի հետեւանքներից վախենալու պատճառով կարող են խնդիրներ ունենալ ծառայությունների մատչելիության հարցում: Հետեւաբար, հատուկ ուշադրություն պետք է դարձնել տարբեր սոցիալական խմբերին, եւ ոստիկանությունը պետք է պատկերացում ունենա մարզինալացված կամ փոքրամասնություն կազմող խմբերին պատկանող կանանց համար առկա որոշակի ռիսկերի եւ նրանց կարիքների մասին:

Բռնության տղամարդ զոհերը

Չնայած այն հանգամանքին, որ ընդհանուր առմամբ կանայք են ավելի հաճախ ենթարկվում ընտանեկան բռնության, եւ ավելի շատ նրանց է վնաս հասցվում, կասկած չկա, որ որոշ տղամարդիկ կարող են դառնալ ընտանեկան բռնության բոլոր ձեւերի զոհ:

Տղամարդկանց համար հաղորդման խոչընդոտները.

- ▶ Ոտնձգության ենթարկված տղամարդիկ վախենում են, որ մարդիկ չեն հավատա իրենց:
- ▶ Հասարակության մեջ տարածված է այն կարծրատիպը, որ կանայք չեն կարող ոտնձգություն կատարել:
- ▶ Նրանք կարող են անարգվել իրենց անձը պաշտպանել չկարողանալու համար:
- ▶ Եթե բռնությունը (հարաբերությունների շրջանակից դուրս) գործադրվել է տղամարդու կողմից, ապա նրանք կարող են վախենալ որպես համասեռամուլ պիտակավորվելուց:
- ▶ Հաճախ նշվում է, որ ծառայությունները նախատեսված են «կանանց եւ երեխաների» համար:
- ▶ Նրանք վախենում են իրենց երեխաներին կորցնելուց:

Ծառայությունների մատուցման խոչընդոտները

- ▶ Օգնություն խնդրող տղամարդկանց ամենաբարձր գոյություն ունի սոցիալական խարան, քանի որ նրանք համարվում են թույլ եւ ոչ այնքան ամուսնացած: Ծառայություն մատուցողները կարող են առաջնորդվել նույն ենթադրություններից/ կարծրատիպերից մի քանիսով:
- ▶ Չոհերի համար նախատեսված ծառայությունների դեպքում, որոնք մշակվել են կանանց համար նախատեսված ծառայություններից անկախ, հնարավոր է տղամարդկանց կարիքներին համարժեք ուշադրություն չդարձվի:
- ▶ Բացակայում է տղամարդկանց համար կացարանի տրամադրման ծառայությունը:
- ▶ Գոյություն չունի վերապատրաստման դասընթաց, որի թիրախը տղամարդկանց բնորոշ կոնֆլիկտային իրավիճակներին միջամտությունն է: Հոգեբանական եւ իրավաբանական խորհրդատվության համար Դուք կարող եք տղամարդկանց ուղարկել Կանանց աջակցության կենտրոն: Հեռ.՝ 099 88 78 08

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Անվտանգության պլան

Ընտանեկան բռնություն վերապրած կանանց համար անվտանգությունը առաջնային կարևորություն ունի և ոստիկանությունը ընտանեկան բռնության գործի հենց սկզբում պետք է կենտրոնանա անվտանգության պլան կազմելու վրա:

Ինչ է անվտանգության պլանը: Անվտանգության պլանը անհատական մանրակրկիտ պլան է, որը բռնությունը վերապրած անձին օգնում է պաշտպանվել բռնություն պարունակող հարաբերության բոլոր փուլերում: Անվտանգության պլանները պետք է կազմվեն բռնության ենթարկված բոլոր անձանց համար և կարող են տարբեր լինել՝ կախված բռնարարի տեսակներից, այն հանգամանքից, թե բռնության ենթարկվածն ապրում է բռնարարի հետ, թե մտածում է հեռանալու մասին, թե արդեն հեռացել է:

Ինչու՞ է դա անհրաժեշտ: Եթե կինը որոշում է բռնություն պարունակող հարաբերությունը չընդհատել, անվտանգության պլանն օգտակար է, որպեսզի նա կարողանա այդ հարաբերության մեջ կողմնորոշվել և գոյատևել այն դեպքում, երբ նա կորոշի վերջ դնել հարաբերություններին: Այն դեպքում, երբ անձը արդեն իսկ հաջողությամբ վերջ է դրել հարաբերություններին և ապրում է ապաստարանում կամ այլ անվտանգ կացարանում, անհրաժեշտ է կիրառել անվտանգության հետևյալ միջոցները.

- ▶ Խրախուսեք նրան փոխել հեռախոսահամարը:
- ▶ Առաջարկեք գրառումներ չկատարել սոցիալական ցանցերում (facebook / odnoklassniki և այլն):
- ▶ Խրախուսեք, որ հրապարակային չդարձնի այն, թե որտեղ է գտնվում և ինչ է պլանավորում անել:
- ▶ Տեղեկացրեք, որ նախընտրելի է խուսափել քաղաքի այն խանութներից և վայրերից, որտեղ բռնարարը կամ իր ընկերները/ընտանիքի անդամները կարող են իրեն հանդիպել:
- ▶ Առաջարկեք տեղեկացնել երեխաների դպրոցին/մանկապարտեզին, թե ով իրավունք ունի երեխաներին տուն տանել և ով՝ ոչ:
- ▶ Տեղեկացրեք, որ զգույշ լինի ընկերներին կամ ընտանիքի անդամներին իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու հարցում, քանի որ բռնարարները կարող են նրանց սպառնալ ու տեղեկություններ կորզել (ապաստանում գտնվելիս՝ սոցիալական աշխատողները կարող են ընտանիքի անդամներին տեղեկացնել, որ բռնության ենթարկված կինն ապահով է, սակայն ԵՐԲԵԶ ապաստանի հասցեն չպետք է փոխանցեն):
- ▶ Տեղեկացրեք նրան, որ զգույշ լինի ցանկացած տեղեկատվություն որևէ մեկին հաղորդելու հարցում:

Վնասի նվազեցմանն ուղղված հետևյալ մոտեցումները կարող են առաջարկել այն անձանց, ովքեր դեռևս գտնվում են բռնություն պարունակող հարաբերություններում.

- ▶ Տեղեկացրեք նրան բռնության շրջապտույտի մասին այնպես, որ նա պատրաստ լինի հաջորդ դրվագին և սկսի հասկանալ, որ բռնարարն իր մեղքով տեղի չի ունենում, այլ՝ շրջապտույտի մասն է:
- ▶ Առաջարկեք, որ մտապահի կամ գրառի բռնության յուրաքանչյուր դրվագի հետ կապված մանրամասները (թաքցնելով գրառումները), այնուհետև վերլուծի ու փորձի բացահայտել կրկնվող վարքագիծը կամ բռնության խթանները:
- ▶ Ներկայացրեք, թե բռնության դեպքում անվտանգության ինչ տարբերակներ կարող է կինն ունենալ.
- ▶ Առաջարկեք, որ նա փորձի բռնարարի բացակայության պայմաններում ապահով կերպով դուրս գալ տանից, որպեսզի հնարավոր բռնության դեպքում պատրաստ լինի դրան (օր՝

ընտրի, թե որ դռներից կամ պատուհաններից ու սանդուղքով կարող է դուրս գալ):

- ▶ Խրախուսեք, որ նա անվտանգության պլաններ մշակի նաև երեխաների հետ՝ սովորեցնելով և փորձարկելով դրանք նրանց հետ (օր՝ գնալ լավ կողպվող սենյակ, հարևանի տուն և այլն):
- ▶ Երեխաներին ասեք գաղտնաբառը, որպեսզի նրանք օգնություն կանչեն:
- ▶ Եթե բռնության ենթարկված կինը որոշում է հեռանալ բռնարարից, ասացեք նրան որ. ԵՐԲԵԶ չհիշատակի կամ ցույց չտա ամուսնալուծվելու կամ նրանից հեռանալու իր մտադրությունը: Սա կարող է ճակատագրական լինել:
- ▶ Ունենա պատրաստ պայուսակ, որտեղ կա որոշակի գումար, իր կողմից օգտագործվող դեղամիջոցները, առաջին անհրաժեշտության հագուստ, որպեսզի արագ հեռանալու դեպքում դրանք հասանելի լինեն: Եթե նման պայուսակ տանը պահելը կարող է կասկածներ առաջացնել, ապա նա կարող է պայուսակը պահել իր կողմից վստահելի անձի մոտ:
- ▶ Փաստաթղթերը (ծննդյան վկայական, ամուսնության վկայական, սեփականության վկայական, աշխատանքային փաստաթղթեր և այլն) պետք է պահել իր մոտ՝ հեշտ հասանելի վայրում:
- ▶ Ունենա բոլոր իրավական փաստաթղթերի կրկնօրինակները և դրանք, ինչպես նաև տան բանալիների հավելյալ օրինակը թողնի վստահելի անձի մոտ:
- ▶ Հարևաններին խնդրի զանգել ոստիկանություն, եթե նրանք աղմուկ են լսում:
- ▶ Բջջային հեռախոսը միշտ իր մոտ կամ ապահով մի վայրում պահի:
- ▶ Անգիր հիշի ընտանեկան բռնության դեպքում թեժ գծի հեռախոսահամարը (Կանանց աջակցման կենտրոնի թեժ գիծ՝ 099 887 808):
- ▶ Ստաժի այն վայրերի մասին, որոնց մասին ամուսինը տեղյակ չէ:
- ▶ Ասի վստահելի ընկերոջը կամ բարեկամին, որ կարող է հրատապ որևէ ապահով վայր գնալու կարիք ունենա:
- ▶ Կազմի փախուստի այնպիսի պլան, որը կոնկրետ է ու մանրամասն և փորձարկի այն.
- ▶ Ո՛ր կգնամ:
- ▶ Ե՛րբ/հ՛ր ժամանակն է ամենաապահովը:
- ▶ Ո՛ր ճանապարհն է ամենաապահովը:
- ▶ Կտանե՞ք արդյոք երեխաներին, թե՛ երեխաները կարող են ընկերների/հարազատների մոտ մնալ:
- ▶ Արդյո՞ք բոլոր փաստաթղթերը պատրաստ են:

Միայն անվտանգության պլան ունենալը չի կարող անվտանգություն երաշխավորել: Օգտակար կլինի առաջարկել, որ բռնության ենթարկվածն ունենա վերահսկողության և ինքնազորության զգացում, և դա կարող է օգնել ընտանեկան բռնության վնասները նվազեցնելու հարցում, բայց խնդրի լիակատար լուծում չէ: Բռնությունից տուժածներին այս մասին պետք է տեղեկացնել:

Բռնության ենթարկված կանանց անվտանգության պլանները կարող են ներառել ինչպես հարաբերությունը չընդհատելու, այնպես էլ՝ հարաբերությունն ընդհատելու ռազմավարություններ: Որոշ կանանց համար հարաբերությունն ընդհատելը կարող է նրա համար մեծացնել վտանգները և իր համար լավագույն տարբերակը կարող է լինել շարունակել հարաբերությունը և աջակցող ծառայությունները պետք է ընդունեն դա:

Բռնության ենթարկված կինը մշտապես պետք է վերանայի անվտանգության իր պլանը՝ կախված փոփոխվող հանգամանքներից: Անվտանգության պլանի վրա ազդում են՝ առկա ռազմավարության հաջողությունը կամ ձախողումը, ընտանեկան բռնության հարցերով զբաղվող ծառայությունների օժանդակությունը և տեղեկատվությունը: Օրինակ, կինը կարող է որոշել դադարեցնել հարաբերությունը՝ համալսարանն ավարտելուց, աշխատանք գտնելուց, երեխաներին ինքնախնամքի տարիքի հասցնելուց հետո: Եթե կնոջը ժամանակ է անհրաժեշտ հարաբերությունը դադարեցնելու համար, ապա նա կարող է տարբեր ռազմավարություններ մշակել այդ ընթացքում իր և երեխաների անվտանգությունը պահպանելու ուղղությամբ⁴⁴:

44 Կանանց աջակցման կենտրոն. Հայաստան. ընտանեկան բռնությունից տուժածների հետ աշխատանքի ուղեցույց, 2016թ., էջեր 51-58:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Տեղեկատվություն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հետ կապված օրենքների և լիազորությունների մասին

- ▶ ՀՀ քրեական օրենսգիրք - (2018թ. փոփոխություններով)
- ▶ Վարչական իրավախախտումների ՀՀ օրենսգիրք - (2018թ. փոփոխություններով)
- ▶ ՀՀ օրենք «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» - 2018թ.
- ▶ ՀՀ կառավարության թիվ 1044-Ն որոշում «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» - 2015թ.
- ▶ «Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման կարգը հաստատելու մասին» - ՀՀ ոստիկանության պետի հրաման, 2018թ.
- ▶ «Ընտանիքում բռնության դեպքերի կրկնման կամ շարունակման անմիջական վտանգի գնահատման չափորոշիչի հաստատման մասին» ՀՀ ոստիկանության պետի հրաման, 2018թ.
- ▶ «Ընտանեկան բռնություն գործադրած անձանց անչափահասների գործերով միավորներում (խմբերում) կանխարգելիչ հաշվառման վերցնելու և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում ընտանեկան բռնության կանխարգելման կարգը հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրաման, 2018թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 4.

Ընտանեկան բռնության քննության ստուգացանկ

| ՄԻՋԱԴԵՊԻ ՎԱՅՐ ԺԱՄԱՆԵԼՈՒՑ ԴԵՏՈ | ԱՎԱՆԱՏԵՍՆԵՐԻ ԶԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> Ուսումնասիրել շրջապատը, բացահայտելու համար հնարավոր անկայուն իրավիճակը <input type="checkbox"/> Առգրավել զենքը <input type="checkbox"/> Պարզել ներկաների ինքնությունը՝ տուժող, կասկածյալ, երեխաներ, ընտանիքի անդամներ, հարևաններ և այլն <input type="checkbox"/> Առանձնացնել ականատեսներին՝ առանձին հարցաքննել յուրաքանչյուրին <input type="checkbox"/> Առանձնացնել տուժողին և կասկածյալին՝ առանձին հարցաքննել յուրաքանչյուրին <input type="checkbox"/> Չրուցել երեխաների հետ <input type="checkbox"/> Գտնել և պահպանել իրեղեն ապացույցները <input type="checkbox"/> Լուսանկարել՝ հանցագործության վայրը/տուժողին/ կասկածյալին <input type="checkbox"/> Չանգահարել շտապ օգնության ծառայություն (անհրաժեշտության դեպքում/տուժողի խնդրանքով) <input type="checkbox"/> Բացատրել ռիսկի գնահատման նպատակն ու անցկացնել այն <input type="checkbox"/> Ձեռնարկել պաշտպանական միջոցներ (նախազգուշացում, անհետաձգելի միջամտության որոշում) և պարզաբանել դրանց էությունը <input type="checkbox"/> Անհրաժեշտության դեպքում ձերբակալել իրավախախտին <input type="checkbox"/> Տուժողի հետ քննարկել անվտանգության պլանը և տրամադրել համապատասխան ծառայությունների հեռախոսահամարները | <ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> Ականատեսներն են ԲՈԼՈՐ ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ԱՌՆՉՎԵԼ ԵՆ ՏՈՒԺՈՂԻ ՎԱՄ ԿԱՍԿԱԾՅԱԼԻ ԴԵՏ Կամ կարող են դեպքի հետ կապված որևէ բան տեսած կամ լսած լինել (դեպքից առաջ, նրա ընթացքում կամ հետո): Համագործակցեք նրանց հետ բոլոր հնարավոր ճանապարհներով: <input type="checkbox"/> Վկաներից գրավոր ցուցմունքներ հավաքեք, հետևեք, որ վկաները տեղում լրացնեն թերթիկները: |

ՀԱՎԵԼՎԱԾ 5.

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՐՑԱԹԵՐԹ

Ընտանիքում բռնության ենթարկված անձին տրվում են հետևյալ հարցերը (անհրաժեշտության դեպքում թարգմանչի օգնությամբ).

Նշված հարցերից 10-ին տրված դրական պատասխանները վկայում են ընտանիքում բռնության դեպքերի կրկնման կամ շարունակման անմիջական վտանգի մասին:

| Հարց | Այո | Ոչ | Չգիտեմ | Հրաժարվում եմ պատասխանել |
|--|-----|----|--------|--------------------------|
| 1. Արդյո՞ք Դուք վնասվածք եք ստացել ներկա միջադեպի հետևանքով | | | | |
| 2. Վախենում ե՞ք արդյոք, որ բռնություն գործադրած անձը կվնասի Ձեզ կամ Ձեր ինամքի տակ գտնվողներին | | | | |
| 3. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը սպառնացել է վնաս հասցնել Ձեզ կամ Ձեր ինամքի տակ գտնվողներին | | | | |
| 4. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը նախկինում Ձեր նկատմամբ ֆիզիկական բռնություն է գործադրել | | | | |
| 5. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը նախկինում Ձեր նկատմամբ սեռական բռնություն է գործադրել | | | | |
| 6. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը նախկինում Ձեզ ահաբեկել է, հսկել է Ձեր գործողությունները, մեկուսացրել է Ձեզ կամ գրկել ֆինանսական միջոցներից | | | | |
| 7. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը տիրապետում է զենքի | | | | |
| 8. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը նախկինում դաժան է վերաբերվել Ձեր ընտանի կենդանու նկատմամբ | | | | |
| 9. Արդյո՞ք ժամանակի ընթացքում բռնությունները, սպառնալիքները սկսել են ավելի դաժան բնույթ կրել կամ ավելի հաճախակի են դարձել | | | | |
| 10. Արդյո՞ք վերջերս (վերջին մեկ տարվա ընթացքում) փորձել եք բաժանվել կամ առանձին ապրել ենթադրյալ բռնություն գործադրած անձից, կամ արդյոք վիճաբանում եք նրա հետ Ձեր երեխաների ինամակալության կամ այլ դատական կարգով լուծվող հարցերի շուրջ | | | | |
| 11. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձի նկատմամբ նախկինում կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում կամ նրան մեղադրանք է առաջադրվել ընտանեկան բռնության համար | | | | |
| 12. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը երբևէ խախտել է պաշտպանական որոշման պահանջները | | | | |
| 13. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը նախկինում դատապարտվել է բռնության գործադրմամբ հանցանք կատարելու համար | | | | |
| 14. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը պայմանականորեն վաղաժամկետ ազատվել է պատիժը կրելուց և արդյոք ներկայումս նա գտնվում է փորձաշրջանում | | | | |
| 15. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձն ունի կախվածություն ալկոհոլից, թմրանյութերից, թմրադեղերից կամ մոլախաղերից | | | | |
| 16. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը հաշվառման է վերցված որևէ հոգեբուժական կամ նարկոլոգիական հաստատությունում | | | | |
| 17. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը բռնություն է գործադրել Ձեր նկատմամբ Ձեր հղիության շրջանում (որի մասին նա տեղյակ է եղել) | | | | |
| 18. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձի ընտանիքի անդամները երբևէ սպառնացել կամ ֆիզիկապես վնասել են Ձեզ | | | | |
| 19. Արդյո՞ք ենթադրյալ բռնություն գործադրած անձը սպառնալիքներ է հնչեցրել Ձեր նկատմամբ, երբ Դուք հաղորդել եք բռնության մասին ոստիկանությանը կամ այլ իրավապահ մարմնին | | | | |
| 20. Արդյո՞ք Դուք հղի եք կամ վերջին մեկ տարում ծննդաբերել եք կամ ունեք հաշմանդամություն | | | | |
| 21. Արդյո՞ք նախկինում հաշտվել եք ենթադրյալ բռնություն գործադրած անձի հետ՝ վերջինիս դեմ հարուցված քրեական կամ քաղաքացիական գործի կամ ընտանեկան բռնության համար կիրառված որևէ պատպանական միջոցի շրջանակում | | | | |

ՀԱՎԵԼՎԱԾ 6

Հասարակական կազմակերպությունների կողմից կիրառվող ռիսկերի գնահատման հարցաթերթ

ՀԿ-ՆԵՐԻ ԿՈՐՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՑ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Տուժողի կողմից իրեն սպառնացող վտանգի և ռիսկի մակարդակի գնահատումը որպես կանոն շատ ճշգրիտ է և այն շատ լուրջ պետք է ընդունվի: Ռիսկի մակարդակը գնահատելիս ռիսկի այլ գործոնների շարքում հարկավոր է նաև պատշաճ ուշադրություն դարձնել իրավախախտի կողմից դրսևորվող սպառնալից և հսկող վարքագծին: Օրինակ, կարևոր է իմանալ, թե արդյոք իրավախախտը հսկում է տուժողի ամենօրյա գործողությունները կամ տուժողին սպառնացող հաղորդագրություններ է հղում: Ի լրումն ոստիկանության հարցաթերթիկում ընդգրկված հարցերին, ՀԿ-ների ստորև ներկայացվող հարցաթերթիկում ներառված հարցերը, մասնավորապես 6, 13, 15 և 16-րդը, թույլ են տալիս ստանալ ռիսկի գնահատման համար անհրաժեշտ տեղեկություններ:

1. Արդյո՞ք բռնարարը սպառնացել է վնաս հասցնել կամ սպանել տուժողին
2. Արդյո՞ք բռնարարը սպառնացել է զենք/դանակ կամ որևէ առարկա օգտագործել է տուժողի դեմ կամ օգտագործել է այն
3. Արդյո՞ք բռնարարը փորձել է խեղդել կամ շնչահեղձ անել տուժողին
4. Արդյո՞ք բռնարարը բռնի կերպով և շարունակաբար խանդում է տուժողին
5. Արդյո՞ք բռնարարը սեռական բռնություն է գործադրել կամ ստիպել է տուժողին սեռական ակտ ունենալ նրա հետ
6. Արդյո՞ք բռնարարը հսկում է տուժողի առօրյա գործողությունները
7. Արդյո՞ք բռնարարի համար զենքը հեշտությամբ հասանելի է
8. Արդյո՞ք բռնարարը գործագուրկ է
9. Արդյո՞ք ավելանում է ֆիզիկական բռնության դաժանությունը և/կամ հաճախությունը
10. Արդյո՞ք բռնարարը հաճախ թմրամիջոցներ և ոգելից խմիչք է օգտագործում
11. Արդյո՞ք բռնարարը բռնություն է գործադրել տուժողի հղիության շրջանում՝ ներկայում կամ անցյալում
12. Արդյո՞ք բռնարարը սպառնում է ինքնասպանություն գործել կամ փորձում է դա անել
13. Արդյո՞ք բռնարարը հետամտել է տուժողին, լրտեսել է նրա հետևից և/կամ սպառնացող գրություններ է հղել նրան
14. Արդյո՞ք բռնարարը խուսափում է կալանավորվելուց ընտանեկան բռնության համար
15. Արդյո՞ք տուժողը կարծում է, որ բռնարարը կարող է փորձել սպանել նրան և/կամ նրա երեխաներին կամ հարազատներին
16. Արդյո՞ք բռնարարը վնասել է որևէ այլ անձի
17. Արդյո՞ք բռնարարի մոտ առկա են հոգեկան խանգարվածության նշաններ
18. Արդյո՞ք բռնարարը վնասել է կամ սպառնացել է սպանել ընտանի կենդանիներին
19. Արդյո՞ք բռնարարը հաշվառման է վերցված ոստիկանությունում կամ ոստիկանության հետ խնդիրներ ունի
20. Արդյո՞ք տուժողն ունի դեպրեսիա կամ հակված է ինքնասպանության
21. Արդյո՞ք տուժողը վերջին ժամանակաշրջանում փորձել է հեռանալ բռնարարից կամ արդյոք երեխաների տեսնելու շուրջ առկա է վիճաբանություն

Ռիսկի գնահատման այլ գործիքները

Կան բազմաթիվ այլ վստահելի ռիսկերի գնահատման մեթոդներ և ուղեցույցներ, որոնք օգտագործվում են տարբեր երկրներում, ինչպիսիք են Ամուսնական հարաբերություններում բռնության ռիսկի

գնահատումը (Spousal Assault Risk Assessment, SARA⁴⁵) , որն ունի մի քանի տարբերակներ (B-SAFER, SARA-S): SARA-ն և նրա տարբերակները անդրադառնում են իրավախախտի, տուժողի և նրանց փոխհարաբերություններում առկա ռիսկի գործոններին, որի հիման վրա ոստիկանությունը ռիսկի մակարդակը գնահատում է որպես ցածր, միջին, բարձր կամ մահացու վտանգավոր⁴⁶ : Ռիսկի յուրաքանչյուր մակարդակը պահանջում է ոստիկանության և այլ գործակալությունների (սոցիալական աշխատողների, աջակցության կենտրոնների և/կամ դատախազների) կողմից տարբեր պաշտպանության միջոցների կիրառում:

Մասնավորապես, Իտալիայում շրջանառության մեջ դրված և Եվրոպայի խորհրդի ուղեցույցում ներկայացված SARA-S տարբերակը⁴⁷ , ներառում է իրավախախտին վերաբերող 10 ռիսկային գործոն և տուժողին վերաբերող հինգ «խոցելիության» գործոն:

Ռիսկի գործոններ.

- ▶ Նախկինում գործադրված ֆիզիկական կամ սեռական բռնություն,
- ▶ Սպառնալիքների հնչեցում,
- ▶ Բռնության սրացում,
- ▶ Պաշտպանական որոշումների խախտում,
- ▶ Կանանց հանդեպ բռնությանը սատարող վերաբերմունք,
- ▶ Նախկինում կատարված քրեական հանցագործություններ,
- ▶ Հարաբերությունների խզման դեպքեր,
- ▶ Ֆինանսական կամ աշխատանքի հետ կապված խնդիրներ,
- ▶ Թմրանյութերի և ալկոհոլի չարաշահում,
- ▶ Հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ:

Խոցելիության գործոններ.

- ▶ Հակասական վերաբերմունք իրավախախտի նկատմամբ,
- ▶ Սարսափ իրավախախտի նկատմամբ,
- ▶ Ծառայությունների, աջակցության բացակայություն,
- ▶ Համատեղ երեխաներ, աշխատանք նույն վայրում, սահմանափակ շարժունակություն, սոցիալական մեկուսացում,
- ▶ Հոգեկան կամ ֆիզիկական հիվանդություն:

ՀԱՎԵԼՎԱԾ 7

Օգտակար կայքեր

- ▶ www.womensupportcenter.org
- ▶ www.wrcorg.am
- ▶ www.womenofarmenia.org
- ▶ www.pinkarmenia.org

45 Ռ. Կոռպ և Ս. Հարթ (2000թ.) Ամուսնական հարաբերություններում բռնության ռիսկի գնահատման ուղեցույց ուղեցույց՝ չափահաս արական սեռի իրավախախտների հուսալիությունը և նրանց նկատմամբ վստահությունը, Օրենք և մարդու վարքագիծ, 20(1), էջեր 101-118.

46 Եվրոպայի խորհուրդ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում իրավապահ մարմինների և արդարադատության համակարգի աշխատակիցների աշխատանքի արդյունավետության բարձրացում» 2016թ., էջ 43-44:

47 Եվրոպայի խորհուրդ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում իրավապահ մարմինների և արդարադատության համակարգի աշխատակիցների աշխատանքի արդյունավետության բարձրացում» 2016թ.:

Եվրոպայի խորհրդը համագործակցում է ՀՀ ոստիկանության հետ «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար» ծրագրը շրջանակում, որի նպատակն է զարգացնել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարին և կանխարգելմանը մասնակցող հիմնական շահակիցների կարողությունները Եվրոպական համապատասխան չափանիշների վերաբերյալ, մասնավորապես՝ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի» (Ստամբուլյան կոնվենցիայի) մասին:

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:



COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE